№ 161 ՇԱԲԱԹ ՅՈՒԼԻՍԻ 26

1908

ԵՐԵՍՈՒՆՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՇԱԲԱԹ ՅՈՒԼԻՍԻ 26 № 161

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի· կէս տարվանը 6 ռուբլի·
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրութեան մէջ.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція „Мшакъ“ Базарная ул. д. Тамамшева № 16.
Կամ Tiflis, Rédaction „Mschak“.
Տէլէֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից)
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ
Տէլէֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՄՇԱԿ
(36-րդ ՏԱՐԻ)
ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ
Հասցէն՝
ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ».
TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

ՕԳՈՍՏՈՍԻ 1-Ից ՄԻՆՉԵՒ ՏԱՐՎԱՅ ՎԵՐՋԸ 5 ՌՈՒԲԼԻ

Ամսական մէկ ռուբլի

Ամերիկա տարեկան	6 դոլար
Եւրոպա »	30 ֆրանկ
Պարսկաստան »	10 ռուբլի
Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել	40 կոպ.

Կոյսերի հայոց ս. Կարապետ եկեղեցու երեցփոխուհի կոյս Հռիփսիմէ Թայիրեանցը պատիւ է համարում յայտնել ի գիտութիւն պ. պ. Ծխականների և յարգելի հասարակութեան, որ առաջիկայ կիրակի օրը, ամսոյ 27-ին, ս. պատարագից յետոյ ժամը 1-ին, նոյն եկեղեցում

ԼԻՆԵԼՈՒ Է
ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ

եկեղեցուն նիւթականապէս և բարոյապէս աջակցող
ՀԱՆԳՈՒՑԵԱԼ ԲԱՐԵՐԱՐՆԵՐԻ ԱՆՄԱՀ ՑԻՇԱՏԱԿԻՆ։

Հաշուապահական եւ Գրասենեկային
ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ԿՈՒՐՍԵՐ
ԹԻՖԼԻՍԻ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԴՊՐՈՑԻՆ ԿԻՑ
(Ինճեներդ տարի)

Կուրսերում աւանդվում են. հաշուապահութիւն, առևտրական թղթակցութիւն, առևտրական օրէնսգիտութիւն և գեղագրութիւն։ Ցանկացողներին սովորեցվում է գրող մեքենայի վրա աշխատել։

Պարապմունքների սկիզբը սեպտեմբերի 15-ից 1908 թ.

Կուրսերը շարունակվում են ոչ պակաս 6 ամսից։ Պարապմունքները տեղի են ունենում երեկոները, շաբաթական երեք անգամ։

ՈՒՆԿՆԴԻՐ ԿԱՐՈՂ ԵՆ ԼԻՆԵԼ ԳՐԱԳԷՏ ԱՆՁԵՐ ԵՐԿՈՒ ՍԵՌԻՑ
Ամբողջ կուրսի վճարն է 40 ռուբլի

Խնդիրները—Թիֆլիսի առևտրական դպրոցի դիրեկտորի անունով—ընդունվում են դպրոցի գրասենեկում՝ առաւօտեան ժամը 10-ից մինչև 12-ը։

Դպրոցի դիրեկտոր՝ Գ. Գեխսման
առ. (ապ.) (չ. շ.) 12—2

Մաժուլի տակ է և մի երկու օրից լոյս կը տեսնէ

Թիւրք սահմանադրութիւնը
և
ԵՐԻՏԱՍԱՐԴ ԹԻՒՐՔ ԿՈՒՄԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԸ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1) Կայսերական հրովարտակը, Աբդիւլ-Համիդի պատկերով
2) Սահմանադրութիւնը, Միթհադ փաշայի պատկերով
3) Երկու խօսք «Միթհադեան սահմանադրութեան» մասին
4) Ահմէդ Ռիզայի կենսագրութիւնն ու պատկերը
5) «Միութիւն և առաջադիմութիւն» կուսակցութ. ծրագիրը
6) Սաբահէդդինի կենսագրութիւնն ու պատկերը
7) «Ապակենտրոնացման և անհատական նախաձեռնութեան» կուսակ. ծրագիրը
8) Դոկտ. Աբդուլլահ Զէվդէթի կենսագրութիւնն ու պատկերը
9) «Շուրայի Օսմանի» կուսակցութեան ծրագիրը

Կազմեց Տ. ՁԱՒԷՆ
Գինն է 20 կոպ.

Դիմել՝ Վ. Վարդանեան, Типографія «Эпоха», Гановская № 3. Միւս քաղաքներից փողի փոխարէն կարելի է ուղարկել նամակադրոշմներ։
(առ.—3) 6—1

Էմմ. բաեռ. ՆԱԶԱՐԵԱՆՑ
Լոյս տեսան
1) «Ընտիր Հատուածներ» ա. մաս—արձակ, հինգերորդ տիպ, 370 երես.
2) «Ընտ. Հատ.» Բ. մաս—բանաստեղծութիւն, երկրորդ տիպ, 416 երես.
Երկուսն էլ բարեփոխված և մեր նորագոյն գրողների երկերով հարստացրած։
Իւրաքանչիւր մասի գինն է 80 կոպ.։ Գումարով գնողներին՝ 65 կոպ.։ Երկու մասերը միասին՝ 1 ր. 50 կոպ.։ Գումարով գնողին՝ 1 ր. 20 կ.։ Յօրինողին դիմողը ճանապարհածախս չէ տալիս։
Դիմել՝ 1) МОСКВА, Свящ. Э. Назарянцъ.
2) ТИФЛИСЪ, Центральная Книжная Торговля.
3) БАКУ, Книжный магазинъ «Сотрудникъ»
(ա.) 10—1

ՕԶԱԽԻ ՇՈՒՐՋԸ

II

Վիշտ ու հոգս շատ է ամբարվել օջախի շուրջը։

Եւ տարիներ են հարկաւոր, որ քայքայված գիւղական կեանքը իր կանոնաւոր զարգացման շաւղի վրա դրվի։

Մենք հարց ու փորձեր արինք Թիւրքահայ պանդուխտներից, որոնք նորերս եղել են երկրի մէջ։ Նրանք նկարագրում են տիրող դրութիւնը մռայլ գոյներով։

— Մեր հողի սահմանները փոքրացել են,—գանգատվում էր մէկը։—Մեզ նից ոչ ոք չէր համարձակվում բողոքել հարևան քիւրդերի բռնութիւնների դէմ և ստիպված էինք սեղմվել ու կուչ գալ, թողնելով մեր հողերի մի մասը նրանց ձեռքին։

— Մենք տալիս ենք մասնաւոր տուրքեր մերձակայ բէգերին,—գանգատվում էր մի ուրիշը,—մինչդեռ հողը ամենևին բէգական չէ։

— Մեր գիւղի համփաներ շատ նեղ վիճակի մէջ են զցել խեղճերիս,—գանգատվում էր երրորդը։—Մեր հարազատները մեզ նեղում են նոյնպէս անգութ ու անխնայ կերպով։

— Մենք ահ ու դողի մէջ էինք մշտական կասկածից, խուզարկութիւններից, տուգանքներից և բանտարկութիւնից,—աւելացնում էր չորրորդը։

— Մենք այլևս անկարող ենք տանել այն տուրքերը և հարկերը, որոնք պահանջվում են ժողովրդից,—գանգատվում էր հինգերորդը։—Պահանջում են հինը և նորը, անում են անսպասելի պահանջներ, իսկ ով կարող էր յանդգնել բողոքելու մասին։

Մենք չենք խօսում այլևս այնպիսի գանգատների մասին, որոնք վերաբերում են դպրոցների, արհեստանոցների, տնտեսական բարւոքումների և զանազան կուլտուրական հիմնարկութիւնների ու կազմակերպութիւնների բացակայութեանը, որովհետև դժոխային արհաւիրքների մէջ մարդիկ նախ և առաջ անխուսափելի և անհրաժեշտ պահանջներին էին տալիս առաջնակարգ նշանակութիւն և միայն այժմ այդ կուլտուրական պահանջները հանդէս կը գան իրանց բոլոր ոյժով և ստիպողականութեամբ։

Թիւրքահայ պանդուխտների առաջ, որոնք կը վերադառնան հայրենիք, պարտականութիւն է հանդէս գալիս լուծել բոլոր դիզված կնճիռները, վերականգնել քայքայված տնտեսութիւնը և շաւիղներ բանալ նոր բարւոքումների համար։

Հասարակական կեանքը, որ խեղդված էր արհաւիրքի տարիներում, պէտք է արթնանայ և առաջ մղէ մի շարք էական և կարևոր խնդիրներ, որոնք կարօտ են յուրջ ուսումնասիրութեան և մշակութեան։

Մենք, հրաւէր կարդալով թիւրքահայ մեր եղբայրներին խտանալու օջախի շուրջը և ձեռնարկելու վերանորոգչական ու կուլտուրական գործունէութեան, շատ կը ցանկայինք, որ նրանք զգային բոպէների ըղձութիւնը և, խուսափելով անբովանդակ ֆրազների և դատարկ հռետորականութիւնների հեղեղներից, նուիրէին իրանց ժամանակն ու եռանդը երկրի վերածնութեան հիմնաւոր աշխատանքին, նպաստելով էական և ընդարձակ կուլտուրական և քաղաքացիական նպատակների իրագործութեան։

Ա. Քալանթար

ԹԻՒՐՔԻԱՆ ԱԶԱՏԱԳՐՈՒԹԵԱՆ ՇԵՄՔԻՆ

Թիւրքական բանտերում գտնվող քաղաքական կալանաւորների թիւը հասնում է 80,000-ի։ Ամնիստիան իրագործվում է փոքր առ փոքր։ Ստամբուլի կենտրոնական բանտում, ուր պահվում են 1200 կալանաւորներ, քրէական յանցաւորները թոյլ չը տուին ազատելու 55 ազմինիստրատիվ կարգով կալանաւորվածներին։

—

Պահպանողական «Standard» թերթը երկիւղ է յայտնում, որ մի գուցէ թիւրքական անդրները բռնկող նիւթ ծառայեն Եգիպտոսի, Հնդկաստանի և Պուղնստանի համար։ «Daily News» արմատական թերթը նկատում է, որ Եգիպտոսում և Հնդկաստանում ներկայացուցչական հաստատութիւն հրաւիրելն անխուսափելի է դառնում։ Լրագիրը այդ փաստը ասում է մեծ բաւականութեամբ։

—

Կ. Պոլիս, 24 յուլիսի

Երէկ շէյխ-իւլ-իսլամը սուլթանի մօտ էր զեկուցումով գործի դրութեան մասին։ Շէյխ-իւլ-իսլամը յայտնեց, որ չէ կարող մի կաբինէտում մնալ մեծ-վէզիրի հետ, որը, չը նայելով իր հաւաստիացումներին, խախտում է սահմանադրութեան երդումը։ Երեկոյեան մեծ-վէզիրը յանձնեց մինիստրութեան կողմից հրաժարականի խնդիրը, պատճառ բերելով վերջին խատաբ-հիմայիները, որը հասարակական կարծիքի դժգոհութիւնը յարուցեց։ Սուլթանը կէս գիշերից յետոյ ընդունեց հրաժարականը։ Շէյխ-իւլ-իսլամը և նախկին մեծ-վէզիր Քեամիլ-փաշան մասնակցում են խորհրդակցութիւններին նոր մինիստրութիւն կազմելու մասին։

(«Հ. Գ.»)

—

Կ. Պոլիս, 24 յուլիսի

Դիշերը կալանաւորվեցին ներքին գործերի և ծովային մինիստրը, Պէրայի նահանգապետ զեներալ Ռիզա, սենեկապետ Բաղիր և սուլթանի աստղագէտ Արդուլլահ։ Այդ կալանաւորութիւնները վերագրում են երիտասարդ թիւրքերի կոմիտէի ճնշմանը։

Մեծ-վէզիր նշանակված է Քեամիլ-փաշան, առանց պօրտֆէյլի նախկին մինիստրը։ Երիտասարդ թիւրքերի կոմիտեի թեկնածուներն էին մեծ-վէզիրի պաշտօնի համար ժողովրդական լուսաւորութեան մինիստր Հակկը-բէյը կամ մակեդոնական զեներալ-նահանգապետ Հիլմի-փաշան։

(«Հ. Գ.»)

—

Անցեալ կիրակի երեկոյեան սուլթանը ներկայ էր Եըլդըզի թատրոնում տրվող ներկայացմանը։ Վիէննայի «Die Zeit» լրագրի ասելով, սուլթանը նկատել է իր մերձաւորներին. «30 տարի ես գերութեան մէջ էի։ Այժմ ես ազատութիւն տուի ոչ միայն ժողովրդին, այլ և ինձ»։

—

Զանազան ազգութիւնների պատկանող հրոսակախմբերը ցրվում են իրանց տները։ Սալոնիկից հաղորդում են, որ այնտեղ ամենայն օր Մակէդոնիայի այլ և այլ տեղերից գալիս են նախկին հրոսակները։ Լուր է պտտում, որ բոլգարական հրոսակախմբերի կազմակերպիչ յայտնի Սանդանսկին, որի գլխի համար դեռ ևս մօտիկ ժամանակներս մեծ պարգև էր խոստացվում, ներկայացաւ թիւրքի իշխանութեանը Սալոնիկում։ Նրա մուտքը քաղաքի մէջ հանդիսաւոր բնաւորութիւն էր կրում։ Երիտասարդ թիւրքերը դիմաւորեցին Սանդանսկուն մեծ շուրջով։

—

Կ. Պոլսում ազգային հանգանակութիւն է սկսված պարլամենտի նոր շինութիւն կառուցանելու համար։

—

Սուլթանը ցանկութիւն է յայտնել վերացնելու հարեմը։ Արքայազունների համար այսուհետև կին պիտի ուզեն եւրոպական արքայական տան դուստրներից, որոնց իրաւունք կը վերապահվի դատանել իրանց կրօնը։

—

Թիւրքական մամուլը յիշում է այն օրերը, երբ ցենզուրան արգելում էր սպասելի կերպով, ատոր վրայ տարակոյս անգամ չկայ։ «Times»-ի Սալոնիկի և Մոնաստիրի թղթակիցը կը գովէ այն կատարեալ կարգապահութիւնը՝ որ կը տիրէ երիտասարդ թիւրք պրոպագանդիստներու մէջ՝ և այսպիսի կանոնաւոր յուզման մը յայտնութիւնը միակը կը նկատէ իր տեսակին մէջ։

Այսու հանդերձ, կան բաղմաթիւ թերթեր, որոնց գիտողութիւններն ու հաւատքը խառն է յոյսով ու թերահաւատութիւններով։ Ասոնց կարգին են շարք մը նշանաւոր օրաթերթեր, ինչպէս «Daily Telegraph», «Standard», «Daily News», «Leader», «Chronicle» և այլն։

«Daily News» «Արագ յաղթանակ մը» խմբագրականով կը գրէ. «Երկրորդ օսմանեան պարլամէնտը նախորդէն աւելի խոստմնալից հանգամանքներու ներքև կը բացուի. 1876-ին Աբդիւլ Համիդ երկու նպատակ ունէր աչքի առաջ՝ սահմանադրութիւն շնորհած պահուն։ Կուզէր խոյս տալ եւրոպական բարենորոգման ծրագրէն՝ որով Բուլգարիոյ ինքնավարութիւն տալ կը բաղձային։ Իր գահը պարտաւորուած էր գնել՝ Միդհատ փաշայի և անոր ազատական բարեկամաց պայմաններն ընդունելով։ Այսօր ալ, անշուշտ, 32 տարի առաջուան չափ կեղծ է։ Բայց կը վախնայ, ու վախը, որքան որ տևէ, ընդունակ է տեսակ մը ակամայ անկեղծութիւն յառաջ բերել։ 1876-ին իր խօսքը պահելու ժամ ոյժ մը չկար ետին։ Այդօրուայ երիտասարդ-թիւրքերը զինուորներ չէին։ Անոնք կէս ուսած օֆիցէրներու ակումբ մըն էին։ Ժողովրդական ամբոխը նուազ բողոքներ ունէր այն ատեն. արևմտեան դատիարակութիւնը տեսակէտներով։

Ասանկ միամիտ մարդիկ կան Լոնդոնի նման քաղաքի մը մէջ իսկ, հակառակ որ իւրաքանչիւր օրաթերթի խմբագրական բացարձակ սկեպտիկութիւն կը յայտնէ։

—

Սուլթանի այս նոր կատակերգութիւնը առաջին փորձը չէ։ Դեռ հուշակուեցաւ այդ 1876 թ. նոյեմբերին և Միդհատի համբաւոր պարլամէնտը խմբուեցաւ յիշեալ տարուայ դեկտ. 23-ին, որ Աբդիւլ Համիդ թիւն համարելով, անմիջապէս յետաձգեց և այնուհետև երկու անգամ խոստացաւ վերսին հաստատել, 1878 ին և 1880-ին, բայց երկու անգամն ալ միայն խոստում մնացին։

1876 թ. շնորհուած սահմանադրութեան կարգերը սոյն տողերը գրած պահուս աչքի առաջ ունիմ և կրնամ անծանօթներն ալ վստահեցնել թէ՝ անգլիական սահմանադրական կարգերն իսկ կը նսեմացնեն ատոնք... Թղթի վրայ... Ազատութիւն անհատի, ինչքի, մամուլի, խօսքի, համահաւասարութիւն օրէնքի առանց ցեղային խտրութեան, ժամանակութիւն օրէնսդրական գործոց բոլոր հպատակ ազգութեանց անխտիր, և այլն և այլն...

Եթէ յիշեմ որ անգլիական մամուլը, առանց բացառութեան, ծիծաղի նիւթ դարձուցած է սուլթանի ներկայ խայտառակ վարժունքը, չեմ կարծեր թէ իրաւացի խօսած կըլլամ, որովհետև «Times»-ի նման թերթ մը խանդավառութիւն կը յայտնէ երիտասարդ թիւրքերուն այս «անարիւն յեղափոխութեան» վրայ և մեծամեծ ակնկալութիւններ կը գուշակէ։ Որ այս շարժումը յառաջ եկաւ խիստ խաղաղ ու անարիւն։

Ամենայն դեպքում կարելի է ասել, որ Եվրոպան ոչ մի դեր չունեցաւ այդ գործում։ Ինչպէս ասում է «Times»-ը, Եվրոպան ոչ մի դեր չունեցաւ Ռումելիայի միացման

լրագիրներին տպագրել հեռագիրներ Պօրտուգալիայի թագաւորի սպանութեան մասին և երբ լրագիրները զրում էին, որ Պօրտուգալիայի թագաւորը իր որդու հետ միասին մեռան զժբաղդ դէպքից։ Պարսկաստանին սահմանադրութիւն շնորհելու առիթով մամուլին արդելված էր խօսել, մինչդեռ մէջլիսը քանդելու և պատգամաւորներին պատժելու մասին ցենզուրան առանձնապէս հրաւիրում էր մամուլի ուշադրութիւնը։

—

Յուլիսի 15-ին տեղի է ունեցել փաստաբանների և բժիշկների ցոյցը։

—

Միտրովիցում երիտասարդ-թիւրքերի կոմիտէտը մահվան պատժի է ենթարկել մի մահմեդականի, որը երկու օր առաջ սպանել էր քրիստոնեաներից մէկին։ Պատիժը անմիջապէս ի կատար է ածված։

—

Պարիզ, 24 յուլիսի

Օսմանեան «Դիւրչի» լիգային, որը թիւրքական գաղթականութեան կողմից ուղերձ մատուցեց ի պատիւ Ֆրանսիայի, Կլէմանսօն կառավարութեան անունից համակրութիւն յայտնեց Թիւրքիայի նոր ըէժիմին և ասաց, որ Թիւրքիան կարող է յոյս կապել Ֆրանսիայի բարոյական աջակցութեան վրա։ («Հ. Գ.»)

—

Բերլին, 24 յուլիսի

Անգլիական կառավարութիւնը հաղորդեց գերմանական կառավարութեան, որ ինքն գիտաւորութիւն չունի սպասել գործերի զարգացման Մակեդոնիայում, այդ պատճառով հերթից հանում է իր առաջարկութիւնը շարժուն զօրաբաժնի մասին։ Դրա մասին հաղորդված է բոլոր պետութիւններին։ Այստեղ նոյն բանն է սպասվում մերձակայ ապագայում և Ռուսաստանի կողմից։ («Հ. Գ.»)

—

Վիէննայի «Zeit» լրագրին հեռագրում են Կ. Պոլսից. «Երիտասարդ թիւրքերը երկիւղ են կրում ռուսական ինտրիգներից (?!)։ Նրանք պահանջում են, որ սուլթանի պալատական պահակախումբը կազմվի մակեդոնական զօրքերից»։

—

Կ. Պոլիս, 24 յուլիսի

Սովորական հանդիսաւորութեամբ Բ. Դուռը բերված հրովարտակով Քեամիլ-փաշային յանձնարարվում է մինիստրութիւն կազմել. միևնոյն ժամանակ յայտարարված է, որ նախկին շէյխիւլ-իսլամ Զէմալ-էդդինը, որը նոյնպէս հրաժարական էր տուել, մնում է իր պաշտօնի մէջ։ Մեծ-վէզիրն է նշանակում բոլոր մինիստրներին, չը բաց առնելով զինուորական և ծովային մինիստրներին. դրանով զիջում է արված երիտասարդ-թիւրքերին։ Հրովարտակով նոյնպէս պարտաւորութիւն է դրվում Քեամիլ փաշայի վրա աշխատել երկրի առաջադիմութիւնը ամուր հիմքերի վրա դնելու համար։ Վաղը կը հրատարակվի նոր մինիստրների ցուցակը։

Անգլիական դեսպան Լոյտէը յանձնեց իր հաւատարմագիրները սուլթանին։ Երլդրզ-Քիոշկից նա գնաց Բ. Դուռը, ուր այցելութիւն գործեց նոր մեծ-վէզիրին։ Ամբոխը ուղեկցում էր նրան «կեցցէ Անգլիան, կեցցէ ազատութիւնը» աղաղակներով։

—

Սուլթան Համիդի հրաժարականի լուրերը.—Սուլթանի գահից հրաժարվելու լուրերը չեն արդարանում. «Neue Freie Presse»-ի աշխատակցի հետ զրուցելու ժամանակ Թիւրքական գործերի լաւատեղեակ մի անձ յայտնել է, որ այժմ, ժողովրդին սահմանադրութիւն շնորհելուց յետոյ, սուլթան Աբդիւլ-Համիդը այլ ևս պատճառ չունի երկիւղ կրելու, որովհետև նա հիմք չունի կասկածելու երիտասարդ թիւրքերի կուսակցութեան լոյալութեան վրա։

Ինչ վերաբերում է Թիւրքիայի գահաժառանգութեան խնդրին, այդ պէտք է լուծի պարլամենտը։ Շատ հաւանական է, որ Թիւրքիայի գահաժառանգութեան կարգը այժմ կը փոխվի, հաժաձայնեցնելով նրան այն սիստեմին, որը ընդունված է եւրոպական միապետական պետութիւնների մէջ։

Այդպիսով, թիւրքական գահը ժառանգելու համար սուլթան Համիդի մահից կամ հրաժարականից յետոյ առաջին թեկնածուն կը լինի նրա աւագ որդի Մեհեմեդ Սելիմ էֆենդին։ Սակայն նա հեղինակութիւն չէ վայելում Թիւրքիայում և, եթէ գահաժառանգութեան հարցը յանձնվելու լինի պարլամենտի քննութեան, հաւանօրէն Աբդիւլ-Համիդի յաջորդ կը նշանակվի նրա կրտսեր եղբայր Բիշադը։

—

Ակամայ տրված սահմանադրութիւնը.—Հիմնվելով այն չոր ու գործնական տոնի վրա, որով յայտարարվեց Թիւրքիայում սահմանադրութեան վերածնվելը, «Neue Freie Presse» լրագիրը եզրակացնում է, որ այդ սահմանադրութիւնը սուլթանը տուել է իր կամքի հակառակ։

Վիէննայի լրագրի յայտնած այդ մտքին համակարծիք է նաև «Politische Corresp.»։ Մի անձ, որ մտիկ կերպով ծանօթ է սահմանադրութեան նախօրեակի հանգամանքներին, ասում է, որ սահմանադրութիւնը վերականգնելու նախաձեռնութիւնը ամենևին չէ պատկանում Սաիդ-փաշային։ Այդ միտքը յայտնել է նաև Սաիդ-փաշայի նախորդը՝ Ֆէրիդ փաշան, որի համար և նա պաշտօնազուրկ եղաւ։

Միևնոյն ժամանակ ծառայութիւնից հրաժարեցրած զինուորական մինիստր Ռիզա-փաշան ևս ժամանցոյց է արել սահմանադրութեան վրա, իբրև մի փակ փրկարար միջոց վերջին ժամանակների կրիզիսում։ Բայց սուլթանը լսել անգամ չուզեց սահմանադրութեան մասին և իրար ետևից հեռացնում էր իրան անհաճոյ խորհրդատուներին։ Սաիդ-փաշայի վրա կանգ առաւ նա այն պատճառով, որ յոյս էր դրել նրա իմաստուն փորձառութեան վրա, որը մի ելք կը գտնէր այդ դրութիւնից դուրս գալու, առանց խզելու իր կապերը հին հիմունքներից։ Սակայն Սաիդ փաշան իսկոյն ևթ հասկացաւ շարժումի սպառնալից և յուրջ բնաւորութիւնից, որ այժմ հարկ չը կայ մտածել անգամ շարժումը խաղաղացնելու մասին, զանց առնելով սահմանադրութիւնը։ Հիլմի փաշայի վերջին զեկուցումից, որտեղ յիշված էին երրորդ զօրաբանակի առաջադրած պահանջները, Կ. Պոլսում հասկացան, որ ուշացնել այդ պահանջների իրագործումը անկարելի է։ Լրագիրը առաջ է բերում Հիլմի-փաշայի հետեւեալ հեռագրական զեկուցումը. «Զօրքը պահանջում է անյապաղ սահմանադրութիւն մտցնել։ Եթէ սահմանադրութիւնը կայսրութեան բոլոր մասերում չի յայտարարվի մինչև յուլիսի 13 ը, այն ժամանակ երրորդ զօրաբանակը կը գայ Կ. Պոլսի վրա։ Նրան կը յաջորդի երկրորդ (Աղրիանուպոլսի), չորրորդ (Երզնկայի) և հինգերորդ (Դամասկոսի) զօրաբանակները»։

Այդպիսի պայմաններում սուլթանի տրված սահմանադրութիւնը, «Neue Freie Presse» լրագրի կարծիքով, չէ կարող խաղաղացնել մտքերը։ Բալկանեան թերակղզու վրա վտանգը ոչ միայն չէ վերացված, այլ և աւելի ևս սպառնալից դարձաւ։ Ահա թէ ինչու,—եզրակացնում է լրագիրը,—եթէ պետութիւնները առ այժմ ստիպված են սպասողական դիրք բռնել, այնուամենայնիւ մի բօպէ անգամ չեն կարող աչքից թողնել դրութեան ընթացքը և պարտաւոր են արթուն կերպով հսկել։

—

Թիւրական զօրքի վերակազմութիւնը.—«Petit Parisien» լրագրի Կ. Պոլսի թղթակցի ասելով սուլթանը մտադիր է արմատական բարենորոգութիւն մտցնել իր զօրքերի մէջ։

Եթէ հաւատանք թղթակցին, այդ բարենորոգութիւնների իրագործումը կը յանձնվի դարձեալ նոյն գերմանական գեներալ Գոլցին, որի մասին վերջին ժամանակներս այնչափ շատ խօսում էին։ Գերմանական այդ գեներալը պէտք է մտցնէ նոր ըէժիմ զօրքի մէջ, հեռացնելով բոլոր հին պահպանողականներին և փոխարինելով նրանց նոր, երիտասարդ ոյժերով։

—

Կանայք թիւրական ազատագրական շարժման մէջ.—Արտասահմանեան թերթերը դարձնում են իրանց ուշադրութիւնը այն դիրքի վրա, որ բռնել են Թիւրք կանայք ազատագրական շարժման մէջ։

Նրանք միանգամից թօթափեցին իրանց ճնշող կարգերը և ազատութեան յայտարարումի նշանաւոր օրը փողոց դուրս եկան բաց դէմքերով։ Նրանցից շատերը համարձակ կերպով զբօսնում էին ազատարգկանց հետ թեանցուկ արած։ Մի քանիսը նոյնիսկ հրապարակային ճառախօսներ դուրս հկան, և Թիւրք կնոջ առաջին ազատ խօսքից վրդովականութիւն էր շնչում։ «Ազատութիւն, հաւասարութիւն և եղբայրութիւն» ռազմակոչ խօսքերը չեն հեռանում ազատագրական շարժմանը յարած Թիւրքական կանանց շրթունքներից։ Նրանք դեռ ևս չեն համարձակվում խօսել իրանց իրաւահաւասարութեան մասին, նախ քան իրաւունքը իր սրբագործումը չի ստանայ Թիւրքիայի ուժեղ սեռի մէջ. սակայն կասկածից դուրս է,—ասում է «Zeit» լրագիրը,—որ ազատագրում Թիւրքական կնոջ դերը ժողովրդի ազատագրութեան գործում ամենախոշոր դերերից մէկը կը լինի։

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

—

Թաւրիզից հաղորդում են մեզ, որ այնտեղ կառավարութեան կարգադրութեամբ արգելվում է ընակիչներին զէնք պահել։

—

Բերլին, 24 յուլիսի

«Deus. Kabelchaft» լրագրին հեռագրում են Կայիրէից, որ ըէֆորմների կուսակցութիւնը, Ալի-Եուսուֆի զեկավարվելով, պահանջում է խնդրվից սահմանադրութիւն շնորհել Եգիպտոսին։ («Հ. Գ.»)

—

Թէ որքան ակնթարթ հետևում են գերմանցիները Փոքր Ասիայի տնտեսական զարգացման, չը մոռանալով իրանց շահերը, հետևում է այս փոքր օրինակից։

«Торгово Пр. Газета»-ն, օգտվելով յայտնի արդիւնաբերական գործիչ կոմս Բոբրինսկու յօդուածից, զետեղված լեհական «Առևտրական Լրագրում», մատնանիշ է անում գերմանացիների պակված ջանքերը բամբակագործութեան վերաբերեալ։ 1905—6 և 1906—7 թուերին գերմանացիք արտահանել են Փոքր-Ասիայից նշանաւոր քանակութեամբ բամբակ, գրեթէ հաւասար մեր Անդրկովկասի արդիւնաբերութեան չափին՝ 688,350 պուդ։ Միայն 1904 թուին են գերմանացիները հիմնել «Գերմանական փոքրասիական բամբակի ընկերութիւնը», որը պլանտացիաներ է ձգել Կիլիկիայի Ադանայի վիլայէթում։ Ընկերութեան առաջ կար մի արգելք, որ վերջ ի վերջոյ վերացվեց. դա նպատակայարմար սերմացուի հարցն էր։ Ընկերութիւնը երկար փորձերից յետոյ սերմացու բերել տուեց Թուրքեստանից (Ֆերգանայից), որը միանգամայն գոհացուցիչ արդիւնքներ տուեց։

ԹԻՒՐՔԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՀՆԱՐԱՒՈՐՈՒԹԻՒՆԸ

—

Բոլոր երկիրների առաջադիմական մասը մի չը տեսնված համերաշխութեամբ ընդգծեց փաղիշահի երկրում սահմանադրական կարգեր մտցնելու փաստը, բայց և միևնոյն ժամանակ կասկած յայտնեց Թիւրքական ազատագրական շարժման դեմոկրատական ձգտումների մասին, նկատելով որ այդ շարժումը ջովինիստական բնաւորութեան շատ փայլուն կսիք է կրում։ Իր ժամանակին մենք ընդգծել ենք երիտասարդ-թիւրքերի շարժման այդպիսի արագ աջողութեան պատճառները բանակի և թիւրք հասարակութեան ընդարձակ խաւերի մէջ. այդ շարժումը երբէք դեմոկրատական բնաւորութիւն չունէր, այլ շատ աւելի զուտ մուսուլմանական, ազգային շարժում էր։

Ներկայումս ազատագրական շարժման գլուխ կանգնած քաղաքական կուսակցութեան նշանաբանը՝ «Օսմանեան կայսրութիւնը օսմանցիների համար» պարզ ու բեւեռեռ կերպով է պատկերացնում ազգայնական կուսակցութիւնների յետագայ ձգտումները։

Հենց դրանով է իսկապէս բացատրվում այն, որ փաղիշահը շատ շուտով համաձայնեց վերականգնել 1876 թուականի սահմանադրութիւնը, մի բան, որ և պահանջում էր «առաջադիմութեան և հաւասարութեան օսմանեան կուսակցութիւնը»։

Սուլթանը իր դէմ կանգնած տեսաւ ոչ թէ մի սպառնական, դեմոկրատականապէս տրամադրված ժողովրդային մասսա, որը իր պահանջների մէջ կարող էր ծայրայեղութեան հասնել, այլ ընդհակառակը նրան այնպիսի պահանջներ ներկայացրին, որոնց ժողովուրդը ձգտում էր դեռ 30 տարի առաջ...

1876 թուականի սահմանադրութիւնը վերականգնելով, Աբդիւլ-Համիդ սուլթանը մէկ անգամից երկու նպատակների հասաւ. մի կողմից նա երկար ժամանակով կանգնեցրեց յեղափոխական շարժումը, որ վերջին ժամանակներում սկսել էր սպառնացող չափեր ընդունել կառավարութեան համար, իսկ միւս կողմից, քաղաքական բեմի վրա քաշելով Թիւրք հասարակութեան ազգայնականապէս տրամադրված խաւերին, նա փակում է եւրոպական պետութիւնների Թիւրքական գործերին միջամտելու ճանապարհը։

Եռ ի նկատի ունենալ մակեդոնական խնդիրը, որ այս օրերս պէտք է որոշում ստանար։

Սալոնիկից Վիէննա հաղորդում են, թէ երիտասարդ-թիւրքերի շարժման զեկավարները պահանջեցին Ռուսաստանի և Աւստրիայի քաղաքացիական ագենտներից, որ տրանք անյապաղ թողնեն Մակեդոնիան։

«Neue Freie Presse» թերթի Սալոնիկի թղթակիցը համարեա թէ նոյն բանն է հաղորդում. «Ռուսաստանի և Աւստրիայի քաղաքացիական ագենտները երիտասարդ-թիւրքերի կուսակցութեան գլխաւոր կոմիտէտից առաջարկութիւն են ստացել կարճ ժամանակի ընթացքում թողնել Մակեդոնիան»։

Այսպիսով՝ «թիւրք հոկտեմբերեանները» իրանց քաղաքական գործունէութեան հէնց առաջին քայլերում մի շատ կոպիտ սխալ գործեցին և ձգտում են ամենահիւանդոտ հարցը իրանց «տանային միջոցով» լուծել։

Եթէ այդ լուրը ճշտվի, եթէ միայն յիրաւի երիտասարդ-թիւրքերը այդպիսի պահանջներ կանեն Ռուսաստանի, Անգլիայի և Աւստրիայի քաղաքացիական ագենտներից, այն ժամանակ Անգլիայի և Ռուսաստանի միջամտութիւնը թիւրքական գործերի մէջ, յանուն չարաբաստիկ մակեդոնական հարցի լուծման, անխուսափելի կը լինի։

Բացի դրանից, այդպիսի յանդուգն յայտարարութիւնը «առաջադիմութեան և հաւասարութեան կուսակցութեան» կողմից միանգամայն հակասում է նրանց նախկին հաւաստիացումներին այն մասին, թէ թիւրք կայսրութեան մէջ ապրող բոլոր ազգութիւնները պէտք է խաղաղ և հաշտարար ապրեն միմեանց հետ։

Չէ՞ որ Աւստրիայի և Ռուսաստանի քաղաքացիական ագենտները Սալոնիկում գտնվում են բոլոր մեծ պետութիւնների հաստատութեամբ, ինչպէս և Աբդիւլ-Համիդ սուլթանի թոյլտուութեամբ։

Երիտասարդ թիւրքերի շարժման զեկավարները ոչ մի իրաւունք չունեն պահանջելու, որ քաղաքացիական ագենտները հեռանան։

Երիտասարդ-թիւրքերի գոռոզ վարմունքը կարող է միայն նոր քաղաքական բարդութիւնների պատճառ դառնալ և մինչև իսկ «casusbelli» ծառայել։

Սահմանադրական Թիւրքիան իր գոյութեան հէնց առաջին քայլերում շատ սահուն ճանապարհի վրա է կանգնում և բացարձակ սպառնական դիրք է ընդունում Թիւրքիայի գործերով շահագրգռված պետութիւնների և օսմանեան կայսրութեան մէջ բնակվող քրիստոնեայ ազգութիւնների վերաբերեալ։

(«Բ. Ս.») Առաքել Դերվիշ

ՍՈՒԼԹԱՆ ԱԲԴԻՒԼ-ՀԱՄԻԴԸ ԵՒ ԹԻՒՐՔԻԱՅԻ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆԸ

—

Հեռագիրներից արդէն յայտնի է, որ սուլթան Աբդիւլ-Համիդը յուլիսի 9-ին թէ 10-ին Թիւրքիային սահմանադրութիւն է շնորհել։

Սուլթան Աբդիւլ-Համիդը իր պետութեան մէջ սահմանադրութիւն մտցնելով ինչ է կամեցել անել, արդեօք ազատվել Եւրոպական պետութիւնների խնամակալութիւնից, նրանց տեղի-անտեղի միջամտութիւններից՝ ցոյցերից, սպառնալիքներից, դիմումներից, խորհուրդներից։ Բաւական է համարում՝ որքան ինքը անուանական պետ եղաւ Թիւրքիայի համար, այլ իսկական կառավարողները եղել են՝ երբեմն Անգլիան, երբեմն Ռուսաստանը և այժմ էլ Գերմանիան։ Ջանձրացել է արդեօք ամեն մի չնչին բանի համար այս կամ այն պետութեան պաշտպանութիւնը որոնելով։ Հասկացաւ այն վնասը կամ չարիքը, որ այս կամ այն պետութեան խորհրդով ջրդեր սարքելով՝ պատճառ դարձաւ իր երկիրների մեծ մասի անջատվելուն և անկախ փոքր պետութիւններ կազմվելուն, որ իր երկրի առևտրի, արդիւնաբերութեան և երկաթուղիների կառուցման գործը գտնվում է օտարների ձեռքում։ Նրանք կը յաջորդի (Աղրիանուպոլսի), չորրորդ (Երզնկայի) և հինգերորդ (Դամասկոսի) զօրաբանակները»։

Այդպիսի պայմաններում սուլթանի տրված սահմանադրութիւնը, «Neue Freie Presse» լրագրի կարծիքով, չէ կարող խաղաղացնել մտքերը։ Բալկանեան թերակղզու վրա վտանգը ոչ միայն չէ վերացված, այլ և աւելի ևս սպառնալից դարձաւ։ Ահա թէ ինչու,—եզրակացնում է լրագիրը,—եթէ պետութիւնները առ այժմ ստիպված են սպասողական դիրք բռնել, այնուամենայնիւ մի բօպէ անգամ չեն կարող աչքից թողնել դրութեան ընթացքը և պարտաւոր են արթուն կերպով հսկել։

—

Թիւրական զօրքի վերակազմութիւնը.—«Petit Parisien» լրագրի Կ. Պոլսի թղթակցի ասելով սուլթանը մտադիր է արմատական բարենորոգութիւն մտցնել իր զօրքերի մէջ։

Եթէ հաւատանք թղթակցին, այդ բարենորոգութիւնների իրագործումը կը յանձնվի դարձեալ նոյն գերմանական գեներալ Գոլցին, որի մասին վերջին ժամանակներս այնչափ շատ խօսում էին։ Գերմանական այդ գեներալը պէտք է մտցնէ նոր ըէժիմ զօրքի մէջ, հեռացնելով բոլոր հին պահպանողականներին և փոխարինելով նրանց նոր, երիտասարդ ոյժերով։

—

Կանայք թիւրական ազատագրական շարժման մէջ.—Արտասահմանեան թերթերը դարձնում են իրանց ուշադրութիւնը այն դիրքի վրա, որ բռնել են Թիւրք կանայք ազատագրական շարժման մէջ։

Նրանք միանգամից թօթափեցին իրանց ճնշող կարգերը և ազատութեան յայտարարումի նշանաւոր օրը փողոց դուրս եկան բաց դէմքերով։ Նրանցից շատերը համարձակ կերպով զբօսնում էին ազատարգկանց հետ թեանցուկ արած։ Մի քանիսը նոյնիսկ հրապարակային ճառախօսներ դուրս հկան, և Թիւրք կնոջ առաջին ազատ խօսքից վրդովականութիւն էր շնչում։ «Ազատութիւն, հաւասարութիւն և եղբայրութիւն» ռազմակոչ խօսքերը չեն հեռանում ազատագրական շարժմանը յարած Թիւրքական կանանց շրթունքներից։ Նրանք դեռ ևս չեն համարձակվում խօսել իրանց իրաւահաւասարութեան մասին, նախ քան իրաւունքը իր սրբագործումը չի ստանայ Թիւրքիայի ուժեղ սեռի մէջ. սակայն կասկածից դուրս է,—ասում է «Zeit» լրագիրը,—որ ազատագրում Թիւրքական կնոջ դերը ժողովրդի ազատագրութեան գործում ամենախոշոր դերերից մէկը կը լինի։

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

—

Թաւրիզից հաղորդում են մեզ, որ այնտեղ կառավարութեան կարգադրութեամբ արգելվում է ընակիչներին զէնք պահել։

—

Բերլին, 24 յուլիսի

«Deus. Kabelchaft» լրագրին հեռագրում են Կայիրէից, որ ըէֆորմների կուսակցութիւնը, Ալի-Եուսուֆի զեկավարվելով, պահանջում է խնդրվից սահմանադրութիւն շնորհել Եգիպտոսին։ («Հ. Գ.»)

—

Թէ որքան ակնթարթ հետևում են գերմանցիները Փոքր Ասիայի տնտեսական զարգացման, չը մոռանալով իրանց շահերը, հետևում է այս փոքր օրինակից։

«Торгово Пр. Газета»-ն, օգտվելով յայտնի արդիւնաբերական գործիչ կոմս Բոբրինսկու յօդուածից, զետեղված լեհական «Առևտրական Լրագրում», մատնանիշ է անում գերմանացիների պակված ջանքերը բամբակագործութեան վերաբերեալ։ 1905—6 և 1906—7 թուերին գերմանացիք արտահանել են Փոքր-Ասիայից նշանաւոր քանակութեամբ բամբակ, գրեթէ հաւասար մեր Անդրկովկասի արդիւնաբերութեան չափին՝ 688,350 պուդ։ Միայն 1904 թուին են գերմանացիները հիմնել «Գերմանական փոքրասիական բամբակի ընկերութիւնը», որը պլանտացիաներ է ձգել Կիլիկիայի Ադանայի վիլայէթում։ Ընկերութեան առաջ կար մի արգելք, որ վերջ ի վերջոյ վերացվեց. դա նպատակայարմար սերմացուի հարցն էր։ Ընկերութիւնը երկար փորձերից յետոյ սերմացու բերել տուեց Թուրքեստանից (Ֆերգանայից), որը միանգամայն գոհացուցիչ արդիւնքներ տուեց։

ԹԻՒՐՔԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՀՆԱՐԱՒՈՐՈՒԹԻՒՆԸ

—

Բոլոր երկիրների առաջադիմական մասը մի չը տեսնված համերաշխութեամբ ընդգծեց փաղիշահի երկրում սահմանադրական կարգեր մտցնելու փաստը, բայց և միևնոյն ժամանակ կասկած յայտնեց Թիւրքական ազատագրական շարժման դեմոկրատական ձգտումների մասին, նկատելով որ այդ շարժումը ջովինիստական բնաւորութեան շատ փայլուն կսիք է կրում։ Իր ժամանակին մենք ընդգծել ենք երիտասարդ-թիւրքերի շարժման այդպիսի արագ աջողութեան պատճառները բանակի և Թիւրք հասարակութեան ընդարձակ խաւերի մէջ. այդ շարժումը երբէք դեմոկրատական բնաւորութիւն չունէր, այլ շատ աւելի զուտ մուսուլմանական, ազգային շարժում էր։

Ներկայումս ազատագրական շարժման գլուխ կանգնած քաղաքական կուսակցութեան նշանաբանը՝ «Օսմանեան կայսրութիւնը օսմանցիների համար» պարզ ու բեւեռեռ կերպով է պատկերացնում ազգայնական կուսակցութիւնների յետագայ ձգտումները։

Հենց դրանով է իսկապէս բացատրվում այն, որ փաղիշահը շատ շուտով համաձայնեց վերականգնել 1876 թուականի սահմանադրութիւնը, մի բան, որ և պահանջում էր «առաջադիմութեան և հաւասարութեան օսմանեան կուսակցութիւնը»։

Սուլթանը իր դէմ կանգնած տեսաւ ոչ թէ մի սպառնական, դեմոկրատականապէս տրամադրված ժողովրդային մասսա, որը իր պահանջների մէջ կարող էր ծայրայեղութեան հասնել, այլ ընդհակառակը նրան այնպիսի պահանջներ ներկայացրին, որոնց ժողովուրդը ձգտում էր դեռ 30 տարի առաջ...

1876 թուականի սահմանադրութիւնը վերականգնելով, Աբդիւլ-Համիդ սուլթանը մէկ անգամից երկու նպատակների հասաւ. մի կողմից նա երկար ժամանակով կանգնեցրեց յեղափոխական շարժումը, որ վերջին ժամանակներում սկսել էր սպառնացող չափեր ընդունել կառավարութեան համար, իսկ միւս կողմից, քաղաքական բեմի վրա քաշելով Թիւրք հասարակութեան ազգայնականապէս տրամադրված խաւերին, նա փակում է եւրոպական պետութիւնների Թիւրքական գործերին միջամտելու ճանապարհը։

Եռ ի նկատի ունենալ մակեդոնական խնդիրը, որ այս օրերս պէտք է որոշում ստանար։

Սալոնիկից Վիէննա հաղորդում են, թէ երիտասարդ-թիւրքերի շարժման զեկավարները պահանջեցին Ռուսաստանի և Աւստրիայի քաղաքացիական ագենտներից, որ տրանք անյապաղ թողնեն Մակեդոնիան։

«Neue Freie Presse» թերթի Սալոնիկի թղթակիցը համարեա թէ նոյն բանն է հաղորդում. «Ռուսաստանի և Աւստրիայի քաղաքացիական ագենտները երիտասարդ-թիւրքերի կուսակցութեան գլխաւոր կոմիտէտից առաջարկութիւն են ստացել կարճ ժամանակի ընթացքում թողնել Մակեդոնիան»։

Այսպիսով՝ «թիւրք հոկտեմբերեանները» իրանց քաղաքական գործունէութեան հէնց առաջին քայլերում մի շատ կոպիտ սխալ գործեցին և ձգտում են ամենահիւանդոտ հարցը իրանց «տանային միջոցով» լուծել։

Եթէ այդ լուրը ճշտվի, եթէ միայն յիրաւի երիտասարդ-թիւրքերը այդպիսի պահանջներ կանեն Ռուսաստանի, Անգլիայի և Աւստրիայի քաղաքացիական ագենտներից, այն ժամանակ Անգլիայի և Ռուսաստանի միջամտութիւնը Թիւրքական գործերի մէջ, յանուն չարաբաստիկ մակեդոնական հարցի լուծման, անխուսափելի կը լինի։

Բացի դրանից, այդպիսի յանդուգն յայտարարութիւնը «առաջադիմութեան և հաւասարութեան կուսակցութեան» կողմից միանգամայն հակասում է նրանց նախկին հաւաստիացումներին այն մասին, թէ թիւրք կայսրութեան մէջ ապրող բոլոր ազգութիւնները պէտք է խաղաղ և հաշտարար ապրեն միմեանց հետ։

Չէ՞ որ Աւստրիայի և Ռուսաստանի քաղաքացիական ագենտները Սալոնիկում գտնվում են բոլոր մեծ պետութիւնների հաստատութեամբ, ինչպէս և Աբդիւլ-Համիդ սուլթանի թոյլտուութեամբ։

Երիտասարդ թիւրքերի շարժման զեկավարները ոչ մի իրաւունք չունեն պահանջելու, որ քաղաքացիական ագենտները հեռանան։

Երիտասարդ-թիւրքերի գոռոզ վարմունքը կարող է միայն նոր քաղաքական բարդութիւնների պատճառ դառնալ և մինչև իսկ «casusbelli» ծառայել։

Սահմանադրական Թիւրքիան իր գոյութեան հէնց առաջին քայլերում շատ սահուն ճանապարհի վրա է կանգնում և բացարձակ սպառնական դիրք է ընդունում Թիւրքիայի գործերով շահագրգռված պետութիւնների և օսմանեան կայսրութեան մէջ բնակվող քրիստոնեայ ազգութիւնների վերաբերեալ։

(«Բ. Ս.») Առաքել Դերվիշ

ՍՈՒԼԹԱՆ ԱԲԴԻՒԼ-ՀԱՄԻԴԸ ԵՒ ԹԻՒՐՔԻԱՅԻ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆԸ

—

Հեռագիրներից արդէն յայտնի է, որ սուլթան Աբդիւլ-Համիդը յուլիսի 9-ին թէ 10-ին Թիւրքիային սահմանադրութիւն է շնորհել։

Սուլթան Աբդիւլ-Համիդը իր պետութեան մէջ սահմանադրութիւն մտցնելով ինչ է կամեցել անել, արդեօք ազատվել Եւրոպական պետութիւնների խնամակալութիւնից, նրանց տեղի-անտեղի միջամտութիւններից՝ ցոյցերից, սպառնալիքներից, դիմումներից, խորհուրդներից։ Բաւական է համարում՝ որքան ինքը անուանական պետ եղաւ Թիւրքիայի համար, այլ իսկական կառավարողները եղել են՝ երբեմն Անգլիան, երբեմն Ռուսաստանը և այժմ էլ Գերմանիան։ Ջանձրացել է արդեօք ամեն մի չնչին բանի համար այս կամ այն պետութեան պաշտպանութիւնը որոնելով։ Հասկացաւ այն վնասը կամ չարիքը, որ այս կամ այն պետութեան խորհրդով ջրդեր սարքելով՝ պատճառ դարձաւ իր երկիրների մեծ մասի անջատվելուն և անկախ փոքր պետութիւններ կազմվելուն, որ իր երկրի առևտրի, արդիւնաբերութեան և երկաթուղիների կառուցման գործը գտնվում է օտարների ձեռքում։ Նրանք անյապաղ թողնեն Մակեդոնիան։

«Neue Freie Presse» թերթի Սալոնիկի թղթակիցը համարեա թէ նոյն բանն է հաղորդում. «Ռուսաստանի և Աւստրիայի քաղաքացիական ագենտները երիտասարդ-թիւրքերի կուսակցութեան գլխաւոր կոմիտէտից առաջարկութիւն են ստացել կարճ ժամանակի ընթացքում թողնել Մակեդոնիան»։

Այսպիսով՝ «թիւրք հոկտեմբերեանները» իրանց քաղաքական գործունէութեան հէնց առաջին քայլերում մի շատ կոպիտ սխալ գործեցին և ձգտում են ամենահիւանդոտ հարցը իրանց «տանային միջոցով» լուծել։

Եթէ այդ լուրը ճշտվի, եթէ միայն յիրաւի երիտասարդ-թիւրքերը այդպիսի պահանջներ կանեն Ռուսաստանի, Անգլիայի և Աւստրիայի քաղաքացիական ագենտներից, այն ժամանակ Անգլիայի և Ռուսաստանի միջամտութիւնը Թիւրքական գործերի մէջ, յանուն չարաբաստիկ մակեդոնական հարցի լուծման, անխուսափելի կը լինի։

Բացի դրանից, այդպիսի յանդուգն յայտարարութիւնը «առաջադիմութեան և հաւասարութեան կուսակցութեան» կողմից միանգամայն հակասում է նրանց նախկին հաւաստիացումներին այն մասին, թէ թիւրք կայսրութեան մէջ ապրող բոլոր ազգութիւնները պէտք է խաղաղ և հաշտարար ապրեն միմեանց հետ։

Չէ՞ որ Աւստրիայի և Ռուսաստանի քաղաքացիական ագենտները Սալոնիկում գտնվում են բոլոր մեծ պետութիւնների հաստատութեամբ, ինչպէս և Աբդիւլ-Համիդ սուլթանի թոյլտուութեամբ։

Երիտասարդ թիւրքերի շարժման զեկավարները ոչ մի իրաւունք չունեն պահանջելու, որ քաղաքացիական ագենտները հեռանան։

Երիտասարդ-թիւրքերի գոռոզ վարմունքը կարող է միայն նոր քաղաքական բարդութիւնների պատճառ դառնալ և մինչև իսկ «casusbelli» ծառայել։

Սահմանադրական Թիւրքիան իր գոյութեան հէնց առաջին քայլերում շատ սահուն ճանապարհի վրա է կանգնում և բացարձակ սպառնական դիրք է ընդունում Թիւրքիայի գործերով շահագրգռված պետութիւնների և օսմանեան կայսրութեան մէջ բնակվող քրիստոնեայ ազգութիւնների վերաբերեալ։

(«Բ. Ս.») Առաքել Դերվիշ

ՍՈՒԼԹԱՆ ԱԲԴԻՒԼ-ՀԱՄԻԴԸ ԵՒ ԹԻՒՐՔԻԱՅԻ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆԸ

—

Հեռագիրներից արդէն յայտնի է, որ սուլթան Աբդիւլ-Համիդը յուլիսի 9-ին թէ 10-ին Թիւրքիային սահմանադրութիւն է շնորհել։

Սուլթան Աբդիւլ-Համիդը իր պետութեան մէջ սահմանադրութիւն մտցնելով ինչ է կամեցել անել, արդեօք ազատվել Եւրոպական պետութիւնների խնամակալութիւնից, նրանց տեղի-անտեղի միջամտութիւններից՝ ցոյցերից, սպառնալիքներից, դիմումներից, խորհուրդներից։ Բաւական է համարում՝ որքան ինքը անուանական պետ եղաւ Թիւրքիայի համար, այլ իսկական կառավարողները եղել են՝ երբեմն Անգլիան, երբեմն Ռուսաստանը և այժմ էլ Գերմանիան։ Ջանձրացել է արդեօք ամեն մի չնչին բանի համար այս կամ այն պետութեան պաշտպանութիւնը որոնելով։ Հասկացաւ այն վնասը կամ չարիքը, որ այս կամ այն պետութեան խորհրդով ջրդեր սարքելով՝ պատճառ դարձաւ իր երկիրների մեծ մասի անջատվելուն և անկախ փոքր պետութիւններ կազմվելուն, որ իր երկրի առևտրի, արդիւնաբերութեան և երկաթուղիների կառուցման գործը գտնվում է օ-

նուազ սփռուած էր. բանակը անտարբեր էր։ Աբդիւլ այսօր բարեկարգիչներուն հետ այնքան թեթեւօրէն չի կրնար վարուիլ՝ ինչպէս այն ատեն։ Այսուհանդերձ, բազմաթիւ դժուարութիւններ կան նոր շարժման մէջ։ Պարիզի երիտասարդ-թիւրքերը սուլթանին հեռացումը իրենց առաջին պահանջը դրին, և անոնք խելացի էին։ Քանի թագաւորէ ան, ինարիգներ պիտի սարքէ։ Պիտի ջանայ զինուորները դրամով և սիրոյնոներով գնել։ Ցեղային և կրօնական նախանձներ պիտի յարուցանէ։ Կրնայ ֆանատիկոս դատարձ մը վերանորոգել՝ կոտորածներու հին քաղաքականութեամբ... Շատ բան կախում ունի եւրոպական, և նամանաւանդ անգլիական գործունէութենէն։ Թիւրքերը գիտեն թէ մենք երբէք, Դերժանիոյ նման,

տարների ձեռքը, իսկ բուն ժողովուրդը, իրան պահպանողը քաղցից է կոտորվում։ Իրան պահպանողը քաղաքութիւնը մի մանեմ մը թէ այդ սահմանադրութիւնը Թիւրքերի է ուղղված կամ երիտասարդ-Թիւրքերի շարժման առաջն առնելու, կամ Անգլիայի ու Ռուսաստանի՝ Մակեդոնիայի համար մըշակած ըէֆորմների գործադրութեանը արգելք հանդիսանալու, կամ դա մի նոր թաղարդ է, որով ցանկանում է իմանալ թէ ինչ յեղափոխական կոչակցութիւններ կան իր երկրում և երկրից դուրս, ովքե՞ր են դրանց պարագլուխները, ինչ ոյժ ունեն, ինչ ծրագիր և ինչ գործելակերպ են ընտրել իրանց ծրագիրն իրականացնելու համար, որպէսզի յետոյ դրանց դէմ գործ դնի այն միջոցները՝ առանց խտրութեան ազգի ու կրօնի (մինչև հիմա հալածանքն ուղղված էր քրիստոնեայ տարրի դէմ), հասակի ու սեռի, մեղաւորի ու անմեղի, որպիսին նախ գործ դրվեց Ռուսաստանում, և նոյնը այժմ գործ է դրվում Պարսկաստանում։

Նոյնը կարող է տեղի ունենալ և Թիւրքիայում և սահմանադրութիւնը կը դառնայ մի նոր դժբաղդութիւն Թիւրքիայի ժողովրդի համար, և դա առաջ կը գայ տեղական գործողների բռնած անտակտ ընթացքից։

Արդեօք երիտասարդ-Թիւրքերը կը կարողանան օգտվել սահմանադրութիւնից յօդուտ ժողովրդի, թէ՞, կոյր գործիք դառնալով Աբդիւլ-Համիդի կառավարութեան ձեռքին, մի նոր պատուհաս ևս կաւելացնեն բազմատանջ ժողովրդի վրա—այդ կերևայ մօտ ապագայում։

Ով ի հարկէ լաւ ծանօթ է Աբդիւլ-Համիդի գահ բարձրանալու օրից մինչև օրս արածներին, որի համար արժանացել է հանդուցեալ Գլադստօնի կողմից «Մեծ մարդասպան», ուրիշներից՝ «Կարմիր սուլթան» անուններին,—իսկ հայերս կարող ենք առանց տատանվելու անուանել նրան «Արեան սուլթան»,—նրա համար անհասկանալի, ցնորք կը համարվի Աբդիւլ-Համիդից սահմանադրութիւն սպասելը։

Աբդիւլ-Համիդ ու սահմանադրութիւն—դրանք միմեանց հակասող բաներ են։ Սուլթան Աբդիւլ Համիդն ու սահմանադրութիւնը—երկուսը միասին և միաժամանակ չեն կարող գոյութիւն ունենալ։ Կամ մէկը պէտք է լինի, կամ միւսը։

Այն, ինչ որ ցնորք ու երազ էր համարվում, հիմա դարձել է իրականութիւն։

Սակայն հէնց այդ հանգամանքը ստիպում է մեզ ասել, որ Թիւրքիայի հայ ժողովուրդը չը պէտք է շլանայ սահմանադրութիւն բառից, քանի որ նրան հրատարակողը Աբդիւլ-Համիդն է, որի զուլումները մինչև օրս կրում է իր կաշուի վրա, և որը սահմանադրութիւն հրատարակելով նա չէ փոխվել—ազատի դարձել։ Ուստի պէտք է գնահատել անցքերը փաստական քաւոքումների արժէքով։

Մ. Սարգսեան

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱԽԱԶԳՈՒՇՈՒԹԵԱՆ ՄԻԶՈՑՆԵՐ ԽՕԼԵՐԱՅԻ ԴԷՄ

—

Յուլիսի 22 ին Գուլաձէի Նախագահութեամբ կայացած քաղաքամասերի սանիտարական վերահսկիչների ժողովում որոշված է՝ անմիջապէս ժաքրել տալ Կուր գետի ափերը, խնդրել քաղաքային վարչութեանը միջոցներ բաց թողել բաղնիսի տոմսակներ գնելու և քաղաքի չքաւոր ազգաբնակութեանը ձրի բաժանելու համար, քաղաքի հիւանդանոցներում և նրա բաժանմունքներում ունենալ չայրված կրի պահեստներ, խնդրել ոստիկանապետին պարտաւորեցնելու դռնապաններին, որպէսզի նրանք հսկեն փողոցների ժաքրութեան վրա։ Միևնոյն բանի մասին խնդրել նաև քաղաքային վարչութեանը քաղաքի հրապարակները ժաքուր պահելու համար, անմիջապէս խիստ հսկողութիւն նշանակել շուկաներում վաճառվող ուտեստեղէնների և խմիչքեղէնների վրա և կեղծված սիերքների մասին՝ վաճառողների անուններով՝ լրագրութեան միջոցով յայտարարել ի գիտութիւն ազգաբնակութեան, խնդրել վերահսկիչներին իրանց շրջանները կազմել սանիտարական խմբակներ, հրաւիրելով դրա համար բաւականաչափ ծառայողներ։

ԽՕԼԵՐԱ

—

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, յուլիսի 24-ին.—Ժանտախտի դէմ կռուող յանձնաժողովը հաղորդում է, որ Աստրախանում յուլիսի 22-ին և 23-ին խօլերայով հիւանդացան 8, մեռան 7. Աստրախանի նահանգի սահմաններում հիւանդացան 15, մեռան 3. այդ թւին ենոտաեվեան գաւառում հիւանդացան 4, ցարեվեան գաւառում 2, կալմիցկեան անապատում 1, չէրնօբարեան գաւառում հիւանդացան 4, մեռան 9. ընդամենը Աստրախանի նահանգում էպիդէմիայի սկզբից հիւանդացողներ եղել են 73 և մեռնողներ 31, որոնց թւում Աստրախան քաղաքում հիւանդացան 51, մեռան 24։ Յարիցինում յուլիսի 20-ին խօլերայով հիւանդացողներ եղել են 11, և մեռնողներ են եղել 6. ընդամենը էպիդէմիայի սկզբից հիւանդացան 96, մեռան 55. Սարատովում յուլիսի 20 ին և 21-ին հիւանդացաւ 1, նաւերից հանված են 3, որոնցից մէկը մեռաւ. ընդամենը Սարատովում հիւանդացել են 14, մեռել են 2. Սարատովի նահանգի սահմաններում, չը հաշուելով Սարատովը և Յարիցինը, 11 հիւանդացողներ են եղել 2 մահվան դէպքով, որոնց թւում մի-մի հիւանդացող բալաշովեան գաւառում, երկու-երկու հիւանդացողներ սարատովեան գաւառում, Դուբովկա գիւղում 5 հիւանդացողներ, 2 մահվան դէպք։ Յարիցինի գաւառում և Բօստով Դօնի վրա քաղաքապետութեան մէջ յուլիսի 20 ին երկու հիւանդացողներ են եղել։ Դօնեան երկրորդ շրջանի Կալաչ խուտօրում յուլիսի 22-ին խօլերայով 2 կասկածելի հիւանդներ են եղել։ Սարատովը անբարեյաջող է համարվում խօլերայի նկատմամբ։ Վօլգան Սամարայից մինչև Նիժնի տարածութեան վրա, Բօստովի քաղաքապետութիւնը և Տաժբովի նահանգի Գրեազի գիւղը համարվում են անբարեյաջող խօլերայի նկատմամբ։

Աստրախանում յուլիսի 24-ին խօլերայով հիւանդացել են 22, մեռել են 4. Աստրախանի նահանգի սահմաններում հիւանդացել են 19, մեռել են 5. դրանցից Աստրախանի գաւառում հիւանդացել են 7, մեռել են 2, ենոտաեվեան գաւառում հիւանդացան և մեռան 3. ընդամենը Աստրախանի նահանգում էպիդէմիայի սկզբից 105 հիւանդացողներ են եղել, 40 մահվան դէպքեր, որոնց թւում Աստրախանում հիւանդացել են 73, մեռել են 28։ Յարիցինում յուլիսի 21-ին 17 հիւանդացողներ են եղել 10 մահվան դէպքերով, ընդամենը էպիդէմիայի սկզբից հիւանդացել են 113, մեռել են 65։ Սարատովում յուլիսի 22 ին հիւանդացան 3, մակոյկից հանված է 1. ընդամենը Սարատովում հիւանդացել են 18, մեռել են 2։ Յարիցինի գաւառում հիւանդացան 8, մեռան 3։ Խօլերայով կասկածելի դէպքեր նկատվում էին Սամարայի նահանգում։ Սամարայում և Պոկրովսկայա սլոբոդայում երկու երկու հիւանդացողներ։ Բալաշովում շոգենաւից վերցված է 2, ԲօՖՏՕՠում շոգենաւից վերցված է 1. Դօնի զօրքի շրջանում Կալաչ խուտօրում յուլիսի 23-ին երկու հիւանդացողներ կային։ Կասպից ծովի նաւակայանում եղել է 1 մահվան դէպք։

(«Հ. Գ.»)

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

—

Կարմիր-Աղբիւր (Շամշ. գ.), 20 յուլ.

Աւազակութիւնները դարձեալ շարունակվում են մեր վիճակում. Թուրքական աւազակախմբերը գործում են հնար եղածին չափ. ամառվայ ամիսներում շամշադինցիք հանգիստ օր չեն ունեցել Թուրքերի ձեռքից. մի քանի օր առաջ էլ Թաթլու գիւղում զոհ գնաց մի երիտասարդ հովիւ։

Ամսիս 19 ին սարի ճանապարհին երեք Թուրք երիտասարդ խլում են Համբարձումի ք. Պողոսեանցի ծառայի ձեռքից ձին, որ բեռնաւորված էր զանազան իրերով, իսկ ծառային կապելով մի ծառից հեռանում։ Ոստիկանութիւնը մեր վիճակում բաւական թոյլ է։

Այս տարվայ բերքերը առայժմ աջող են և առատութիւն են խոստանում, եթէ միայն գարնանացանները չը վնասվեն շոգից և ուրիշ բնական պատահարներից։

Ոմն

—

Նալբանդ (Ալէքս. գ.), 21 յուլ.

Ամսիս 18-ին գիւղիս «Մակոյի իւրդ» կոչված ամարանոցից օրը ցերեկով Թուրքերը քշեցին տարան 3 մատեանները։

Դէպքից հազիւ 3 ժամ անցած, տեղեկութիւն հասաւ տեղիս 3 կօզակներին և տանուտէրին։ Անասուններին յետ դարձնելու համար ձեռք առնված միջոցները զուր անցան։ Ասում են, որ յիշեալ անասուններին քշող Թուրքերը փախստականներ են եղել։

Քանդող

—

Դուշեթ, 21 յուլիսի

Ամսիս 19 ին տեղս ժամանեց Թիֆլիսի նահանգապետ պ. Լազինա-Լազինսկին, որ եկել էր տեղի վրա քննելու, ծանօթանալու և վերաստուգելու տեղական գործերը։

Դուշեթի հասարակութիւնը խնդրեց նահանգապետին, որ պատշաճաւոր իշխանութեան առաջ միջնորդէ Դուշեթում չորս-դասարանեան քաղ. դպրոց բանալու համար, որի կարիքը վաղուց զգացվում է։ Նահանգապետը խոստացաւ միջնորդելու։ Հետևեալ օրը, Վարդավառի տօնին, նահանգապետն այցելեց նախ ռուսաց և ապա հայոց եկեղեցիները։ Հայոց անշուք եկեղեցին լաւ տպաւորութիւն չը Թողեց նրա վրա։

Նոյն օրը երեկոյեան նահանգապետը այցելեց տեղիս ժողովական հայոց ս. Գէորգ ուխտատեղին։

Ի դէպ պէտք է ասել, որ մեր քաղաքի փողոցները և հրապարակը, որ մի շատ կեղտոտ է պահվում, նահանգապետի գալու առիթով աւելել էին։

Ամսիս 21-ի առաւօտեան նահանգապետը մեկնեց Թիֆլիս։

Կ. Ա.

—

Ղազախ, 23 յուլիսի

Եղանակները անչափ նպաստաւոր են գիւղացոց համար. շատերը կոնեանն այս տարվան իրանց հացը. միայն նորից քաղցած կը մնան նրանք, որոնք ժամանակին սերմացու չեն ունեցել և որոնց թիւը քիչ չէ։ Այդիների բերքը սակաւ է. խոտ անհամեմատ շատ։

Զ. ք. Ա.

—

Սղնախ, 21 յուլիսի

Այս օրերս Սղնախի հաշտարար դատաւորի մօտ նշանակված էր մի գործի քննութիւնը, որը պարզ բնորոշում է մեզ մօտ գործող խմբակի սխրագործութիւնը։

Երկու տարի առաջ հայոց դպրոցում պատահեց մի անախորժ դէպք, որի առիթով առաջնորդը հրաժարեցրեց երէցփոխ Ադա Ամիրխանեանին պաշտօնից։ Մեր խմբակը շատ ուրախացաւ և երէցփոխ ընտրել տուեց իր թեկնածուին։ Անցան ամիսներ։ Ամիրխանեանը հիւանդացաւ և խմբակը մտածեց օգտվել դէպքից։ Նա լուր տարածեց, որ Ամիրխանեանին հարկաւոր է սիրաշահել և նա 2000 ր. կը նուիրի դպրոցին։ Լուրը տպաւորութիւն Թողեց։ Իսկոյն հաւաքեցին իւրայիններին և Վ. Ենիկոլոփեանի առաջարկութեամբ «զգուանք յայտնեցին սեւագլուխ պոպոզաւորին» Ամիրխանեանին ինքնագլուխ հեռացնելու համար։ Ապա ընտրեցին քննիչներին «գործը վերաքննելու» ու նորից ժողով գումարելով՝ արդար յայտարարեցին Ամիրխանեանին։ Դրանից յետոյ դիմեցին Ամիրխանեանին և պահանջեցին 2500 ր. նուիրել դպրոցին, բայց նա մերժեց։ Ամիրխանեանը յետոյ համաձայնվեց փոխարինարար տալ դպրոցին 2500 ր. 6 անուանի մարդկանց երաշխաւորութեամբ։ Գրեցին մուրհակ և տուեցին, կարծելով որ Ամիրխանեանը չի համարձակվի բողոքել։ Սակայն սխալվեցին։ Ամիրխանեանը ստացաւ 1000 ր., իսկ 1500 ռուբլու պահանջ ներկայացրեց դատարանում։ Այժմ գաւեշտական է՝ թէ ով պէտք է վճարէ այդ 1500 ր.։

Անցեալ շաբաթ Կարղաչում սպանվեց կալուածատէր Յովհաննէս Սափարեանը։ Դիակը բերին Սղնախ։ Կալանաւորված են 7 հոգի։ Պատճառն անձնական թշնամութիւն է։

N. N.

—

Գրօզնա, 22 յուլիսի

Ամսիս 20-ին ծխական դպրոցի դահլիճում կայացաւ երրորդ ծխական ժողովը, ուր պէտք էր ընտրվեր մի պատուիրակ մասնակցելու Աստրախանում կաթողիկոսական ընտրութիւններին։ 70 իրաւասուներից ներկայ էր ժողովին 25 ծխականներ, խօսեցին կաթողիկոսական թեկնածուների մասին, գլխաւորապէս Իզմիրլեանի մասին և ժողովը որոշեց ընտրել այնպիսի պատուիրակ, որ պաշտպանի Իզմիրլեանի թեկնածութիւնը. ապա հարց բարձրացաւ պատուիրակի ճանապարհածախսի համար և եկաւ այն եզրակացութեան, որ դժուարութեամբ կարող է հոգալ մի պատուիրակի ճանապարհածախսը մինչև Աստրախան, ուստի որոշեց իր ձայնը տալ Վլադիկավկազի այդ առիթով ընտրված՝ Իզմիրլեանի պաշտպան՝ պատուիրակ պ. Ներսէս Տէր-Յովհաննիսեանին։

Վ. ք. Տէր-Սահակեան

—

Նոր-Բայազէտ, 19 յուլիսի

Թղթախաղը գնալով մեծ չափեր է ընդունում նաև մեզանում։ Այդ ախտը արմատախիլ անելու նկատմամբ, յաճախ սիրող երիտասարդներ ներկայացրել են մեր բեմի վրա «Թուղթ խաղացողի կեանքը», որպէսզի հանդիսականները տեսնելով թղթախաղի սոսկալի հետևանքները և նրա քայքայող բնաւորութիւնը, հեռու մնան այդ ախտից։ Անկասկած է, որ բեմի վրա տեսնելով Թուղթ խաղացողի կեանքի դէպքերը, բօպէական տրամադրութեան տակ մարդու լացն է գալիս։ Բայց կեանքի մէջ մտնելով մարդիկ շուտով մոռացութեան են տալիս այդ դառնութիւնները և կրկին ու կրկին տարվում թղթամոլութեամբ... չը նայած որ նոյնիսկ իրանք, խաղացողները, իրանց կաշուի վրա յաճախ փորձել են այդ ախտի դժնդակ, վնասակար հետևանքները... Այնտեղ, ուր ժողովրդի մէջ սեփ-սեան գոյները պակասում են կամ մեծ մասամբ ժամանակը պարապութեան—անգործութեան մէջ են անցնում, այդտեղ, իբրև կողմնակի զբաղմունք, ժողովրդի զանազան խաւերում առաջ է գալիս թղթախաղը։ Նոր-Բայազէտը իբրև այդպիսի տեղերից մէկը և ընդհանուր գործերից բացակայող մի անկիւն, իրօք, պէտք է տարված լինէր թղթախաղով կամ գինեմոլութեամբ և այլ կողմնակի անվայել պարապմունքով, իբրև մի տեսակ զբաղմունք։ Եւ ահա այդ իսկ տեսակէտից մեր քաղաքացիներից շատերը իրանց զբաղմունքը որոնում են նաև թղթախաղի մէջ։ խաղում են թէ ինտելիգենտ դասակարգեր, թէ միջակ մարդիկ, թէ ստորին դասը, թէ մէկը և թէ միւսը...

Մեզանում կան մի շարք «զանվախանաները» կամ «տրակտիրներ», ուր լցված զանազան դասակարգերով՝ նստում է թղթախաղը իր ամբողջ թափով, իսկ այնուհետև անցնում է այդ ախտը ընտանիքները... Բայց թէ ինչ հետևանքներ և անախորժութիւններ են առաջ գալիս առհասարակ թղթախաղից կամ նման մի այլ պարապմունքից—այդ մասին աւելորդ է անդամ յիշել։ Սակայն ի նկատի առնելով այդ ախտի վատ հետևանքները և քայքայող ազդեցութիւնը, թող իւրաքանչիւրը զգուշանայ թղթամոլութեանը հետևելուց՝ իր-իսկ անձնական շահերի տեսակէտից, թող թէ բարոյականութեան շահախնդրութիւնից։ Առ այժմ մենք այդքանը կարող ենք յիշեցնել, իսկ յետոյ՝ իրանց մեղքը իրանց շլինքին։

Որսորդ

—

Նոր-Բայազէտ, 17 յուլիսի

Մինչդեռ Կովկասեան բարեգ. ընկ. խորհուրդը Նոր-Բայազէտի տեղ. ճիւղի միջոցով աշխատում է այս տարի մեր գաւառում մի քանի տեղ դպրոցներ բանալ, ահա միւս կողմից ուսումնարանական դիրեկցիայից անցեալ օրը թուղթ ստացվեց մեր դումայում, որով առաջարկվում է, թէ Պետական Դումայի որոշման հիման վրա, Նոր-Բայազէտը, համաձայն 1897 թ. ժողովրդագրութեան, որ ունի 1150 երեխաներ, 8—9—10—11 տարեկան հասակի, պէտք է ունենայ 23 դպրոց՝ իւրաքանչիւր 50 հոգուն մի վարժապետ հաշուելով։ Եւ որովհետև, գրված է Թղթում, Նոր-Բայազէտ քաղաքն արդէն ունի իր երկու ուսումնարանը, հետևապէս պէտք է Նորից բացվեն նաև 21 դպրոցներ, որոնց ուսուցիչների ծախսը ինքը կառավարութիւնն է հոգալու, իսկ տան քրէհը, ծառայ և վառելիքը պէտք է քաղաքը վերցնի իր վրա։ Առաջարկելով այդ բանը քաղաքին, դպրոցական վարչութիւնը յորդորում է այժմից և եթ աշխատել բանալու դպրոցները յաջորդաբար և 10 տարվայ ընթացքում լրացնել 21 դպրոցների թիւը։ Միանգամից 21 ուսուցարան, ճիշտ որ՝ «դպրոցական մի ցանց». երևակայելու բան է. բայց իրողութիւն է։

Թէպէտ մեր քաղաքը այնքան էլ միջոց չունի, որպէսզի կարողանայ այդ հսկայական կրթական հաստատութիւնները միանգամից ուսնել, բայց և այնպէս պէտք է աշխատել՝ օգտվելով առիթից՝ բանալ կամաց-կամաց, ժամանակի ընթացքում, մեր քաղաքի բազմաթիւ թափառաշրջիկ երեխաների համար կրթութեան այդ տաճարները, որտեղ կը պատրաստվեն անկիրթ և գեհենիկ մանուկները, որոնք օրն ի բուն քարշ գալով փողոցներում, իրար հայհոյելով, մէկին ծաղրելով, միւսին անուանարկելով, միմեանց ծեծելով, աւելի շուտ վարժվում են անբարոյական և փողոցային կեանքին...

Շատ բաղդաւոր պէտք է լինենք, որ Գեղական Դումայի շնորհիւ կառավարութիւնը ուղարկում է մեզ լուսաւորութեան մի գունդ՝ լուսաւորելու մեր գաւառական խաւար շրջապատը, որի մթնոլորտում, նոյնիսկ այս լուսաւոր կոչված դարում, դեռ ևս խարխափում է մեր ժողովուրդը... Շատ ուրախ պէտք է լինենք, որ մեր քաղաքային աւագը, քաղ. ամենասուղ միջոցներով, ջանք է անում գոնէ առաջիկայ ուսումնական տարվայ սկզբից ունենալ երկու նոր դպրոցներ, մէկը՝ գոյութիւն ունեցող միդասեանին կից, միւսը՝ մի հեռաւոր թաղում—«Բանդի ժանշա» կոչված քաղաքամասում, որտեղ ապրում են չքաւոր բնակիչներ, որոնք միջոց չունեն իրանց երեխաներին ուղարկել հեռու ուսումնարաններ։ Ուրեմն աշնանից կունենանք, բացի ծխական դպրոցից և ռուսաց ուսումնարանից, որը շուտով չորդասարանեանի կը վերածվի (պրոգիմնազիայի կուրսով, որտեղ կանգնվեն օտար լեզուներ), նաև 3 դպրոցներ առանձին, հաշուելով և միդասեանը։ Իսկ մնացեալների մասին քաղաքը կաշխատէ ապագայում, այնպէս որ տարիների ընթացքում կունենանք մեզանում դպրոցական մի ցանց։

Գ. Սինանեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

◆ Յուլիսի 22-ին Սանահինի մօտերում Ալլահվերդու պրիստաւ Արշակ Յարութիւնեանը, որ վաղուց արդէն հետամուտ է լինում բռնելու Բօրչալուի գաւառում «լեռնային անարխիստներ» անունով գործող Զուբինեանի և Վերմիշեանի աւազակախմբին, տեղեկանալով որ նրանք գտնվում են Սանահին կայարանի մօտիկ Ջրաղացում, վերցնում է իր հետ երեք ստրաժնիկ և երկու գիւղացի ու գնում այնտեղ։ 102-դ վերստի վրա տախտակէ տնակի մօտ նրանք նկատում են գծի պահապան Գրիգոր Օհանեանին, նրա կնոջը և ուրիշ երկու հոգու։ Պրիստաւի հետից գնացող Շնող գիւղի տանուտէր Բագրատ Փարսադանեանը ճանաչում է իսկոյն, որ նրանցից մէկը Վերմիշեանն է, իսկ միւսը՝ Զուբինեանը, և կանչում է պահապանին. «Այդ ո՞վ է քեզ մօտ. դուրս եկ...»—«Այս բօպէիս դուրս կը գանք»,—լսվում է իբրև պատասխան և անմիջապէս էլ որոտում է հաստաբարկ մաուզերներից։ Պրիստաւ Յարութիւնեանը, վիրաւորվելով աջ արմունկից և փորից, ընկնում է ձիուց։ Փարսադանեանը վիրաւորվում է ոտից. մնացու կերպով վիրաւորվում է ստրաժնիկ Պօպովը։ Մնացեալները՝ ուրեանդիկը և ստրաժնիկը, ձգելով հրացանները ու ձիաները, փախչում են։ Վիրաւորված Փարսադանեանը սկսում է պատասխանել աւազակներին գնդակաձգութեամբ և վիրաւորում է Օհանեանին, որը աւազակների հետ միասին կրակում էր։ Այդ միջոցին ժամանում է ապրանքատար գնացքը և փրկում է վիրաւորներին աւազակների ձեռքից։ Վերջիններս փախչում անյայտանում են, իսկ վիրաւորներին գնացքով բերում են Թիֆլիսի երկաթուղային հիւանդանոցը։ Օհանեանը կալանաւորված է։ Աւազակներին հետամուտ լինելու է գնացել Բօրչալուի գաւառապետը, որը գտել է տախտակէ տնակում 3 մուզերեան հրացան և 8 հատ պարպված փամփուշտներ։

◆ Մի խումբ ուսուցիչներ մօտ ժամանակներս դիմել են երկրիս բարձր իշխանութեանը թոյլատրութիւն խնդրելով առաջիկայ սեպտեմբեր ամսից բանալ Թիֆլիսում ութ-դասարանեան առևտրական դպրոց երկու սեռի համար։

◆ Կովկասեան գիւղատնտեսական ընկերութեան խորհուրդը որոշել է զեմստվոյին միջոցներից իրան բաց Թողնված գումարները գործադրել այդ գործական դպրոցի պահպանութեան համար։

◆ Քաղաքային վարչութիւնը որոշել է յանձնարարել քաղաքային սատատիստիկական բիւրոյի կառավարիչ իշ. Գ. Մ. Արղութեան-Երկայնաբազուկին և քաղաքային դումայի քարտուղար Մ. Ա. Զաբարին պատրաստել զեկուցում «Извѣстій Тифлисской городской думы» անունով երկշաբաթաթերթը շուտով հրատարակելու մասին։

◆ Օլգինսկի մանկաբարձական ինստիտուտում ծննդաբեր կանանց ընդունելութիւնը ներկայումս դադարեցված է ազատ մանկակներ չը լինելու պատճառով։

◆ Արէշի գաւառից ստացված տեղեկութիւնների համաձայն, այնտեղ, երկար հեռատաժամութիւններից յետոյ, մօտ ժամանակներս աջողվել է ոչնչացնել Նալբանդեանի աւազակախումբը։

◆ Ներքին գործերի մինիստրութիւնը Կովկասի հայ կաթոլիկների հոգևոր վարչութեան պահպանութեան համար այս տարի յատկացրել է 1180 ռուբլի։

◆ Ս. սինոդը և պետական երկաթուղային վարչութիւնները դիմել են անդրկովկասեան երկաթուղիների վարչութեանը, հարցնելով թէ ինչ պատճառներով մարդատար № 6 գնացքը սիստեմատիկ կերպով ուշանում է Եւրոպական Ռուսաստանի միւս գնացքների համար սահմանված երթևեկութեան ժամացուցակից, որի հետ նա յարմարեցված է։ Այդ հարցապնդումի պատճառը այն է, որ ուշանալու պատճառով ճանապարհորդները ստիպված են լինում գնացքից միւս գնացքը նստելու համար սպասել յաջորդ գնացքներին։

◆ Տեղական առևտրականները դիմել են ներքին գործերի մինիստրութեանը խնդրելով թոյլատրել Թիւրքիայի խաղողների ներմուծումը Սև-ծովի նաւահանգստի վրայով։

◆ Քաղաքային վարչութիւնը վերջացրել է քաղաքի 1909 թ.ի նախահաշուի ծախքերի քննութիւնը։ Այնտեղ, ի միջի այլոց, մտել է Արամեանցի անունով շինված հիւանդանոցի շինութեան պակասութիւնները լրացնելու համար 20,000 ռուբլի և պահպանութեան համար՝ 30,000, նաև 20,000 ռուբլի Զուբալովի անուան ժողովրդական տունը պահելու նպատակով։ Եկամտային նախահաշուի քննութիւնը առ այժմ յետաձգված է։

◆ Էջմիածնից յուլիսի 23-ից հաղորդում են, որ այնտեղ երկու օր առաջ իրան լճի մէջ ձգելով անձնասպանութիւն է գործել տեղական Արսէն քահանայի երիտասարդ որդին՝ ընտանեկան անախորժութիւնների ազդեցութեան տակ։

ՌՕՏԻԿԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

—

◆ Յուլիսի 24-ին Մաղթեան կղզու վրա Ջրասոյզներին ազատող ընկերութեան վրանում բռնված են Վետրօվսկի բանտից փախած 4 կալանաւորներ. 1) Թիֆլիսցի Թէօդոր Եալովի անունով ապրող, Կրաչենկօ Եակովը, որին Ասխաբադի նահանգական դատարանը 1906 թ.ին Վօրօբիէվի այրուն սպանելու համար դատապարտել է 3 տարի ժամանակով կալանաւորների ուղղիչ բաժնում մնալու և յուլիսի 10 ին փախել էր բանտից. 2) Նիկոլայ Այվազեան ազգանունով ապրող, Թիֆլիսի բնակիչ Տարասենկօ Գրիգորից, որին Թիֆլիսի դատաստանական պալատը 1905 թ.ին ոստիկանական գործակալ Սարուխանեանին սպանելու համար դատապարտել էր 5 տարով և 14 ամիս սրանից առաջ փախել էր բանտից. 3) Վլադիմիր Ալէքսէյեվ Դօբրօվոլսկու ազգանունով ապրող Տօմսկու բնակիչ Բրօնշտէյն Այէքսանդր, որին Սամարղանդի նահանգական դատարանը 1906 թ.ին դատապարտել էր 5 տարի և 4 ամսվայ ուղղիչ կալանաւորական բաժանմունքում պահելու միջնասպական հրաթուղային վարչութիւնից կեղծարարութեամբ ապրանք ստանալու և բանտից փախել է յուլիսի 10 ին. 4) Անդրէյ Զիրիկով անուան տակ ապրող Թիֆլիսի բնակիչ Զապրուցկի Եօսիֆ, որին Սամարղանդի ժամանակաւոր զինուորական դատարանը 1907 թ.ին դատապարտել էր 2 տարի և 9 ամիս ուղղիչ կալանաւորութեան բաժանմունքում պահելու Զամօսեցկի 60-րդ հետեակների գնդից երրորդ անգամ փախչելու համար։ Կալանաւորների բաժանմունքից նա փախել էր ներկայ տարվայ յունիսի 29-ին և հասել Թիֆլիս մի շաբաթ սրանից առաջ։ Քննութիւն է կատարվում։

◆ Գրիմազիչեսկայա փողոցում № 2 տան մէջ ապրող Կրեժենչուգ քաղաքի բնակիչ Ելենա Բայչենկօն, որ գանձապահուհու պաշտօնով ծառայում է Ֆիդլերի ներկարարական արհեստանոցում, յուլիսի 24-ին յայտնել է ոստիկանութեանը, որ յուլիսի 23 ին, երեկոյեան ժամը 10 ին, յիշեալ արհեստանոցից, բանալով բաց անելով դուռը, գողացել են 220 ռուբլու արժողութեամբ իրեղէններ։ Գողութեան մէջ կասկածվում են զանազաններ Սեմեօն Իսկրենկօ և Վիկենտի Կօննիկով, որոնք և կալանաւորված են։ Կատարվում է քննութիւն։

◆ Յուլիսի 24-ի գիշերը բռնված է պարսկահպատակ հրէայ Իսահակ Արօն օղլի Սօլոմօն, նոյնը կոչվում է Բարաթով, որը 1906 թ-ի նոյեմբերին գեներալ-նահանգապետութեան սահմաններից արտաքսված լինելով ուղարկված էր Պարսկաստան, ապա անցեալ տարի սեպտեմբերին ինքնագլուխ կերպով աքսորավայրից հեռացել էր։ Աքսորի ժամանակը լրանալուց յետոյ նա նորից աքսորվեց Պարսկաստան և այժմ այնտեղից զարձեալ հեռացել է ինքնագլուխ կերպով։

◆ Յուլիսի 24-ին, երեկոյեան ժամը 6-ին, Բաչինի գաւառի բնակիչ Ալէքսանդր Զլաձէն իր Կրիստինէ կնոջ հետ միասին Կրծանիսից Օրթաճալա վերադառնալու ժամանակ, երբ հասնում են հրէական գերեզմանատանը, 5 հոգի յարձակվում են կնոջ վրա և սպանում։ Սպանվածի դիակը ուղարկված է Միքայելեան հիւանդանոցը։ Քննութիւն է կատարվում այդ դէպքի մասին։ Կասկած կայ, որ ամուսինը ինքն է սպանել իր կնոջը, որի համար և նա կալանաւորված է։

◆ Յուլիսի 24-ին կալանաւորված են Լեոն Շահինեանցի կազմակերպած աւազակախմբի հետեւալ 6 անդամները. Թիֆլիսի քաղաքացիներ՝ Արշակ Էլիսարօվ, Տիգրան Բէգիջանեանց, Նախիջևանի գաւառի բնակիչ Արշակ Խաչիկեանց, ախալցխացի Կարապետ Կարապետեանց, պարսկահպատակ Բարսեղ Ալլահվերդեան և Թիֆլիսի վաճառական Սերգէյ Յարութիւնեան։ Այդ մասին սկսված է քննութիւն։

ԲԱԳՈՒԻ ԼՈՒՐԵՐ

—

◆ Վերջին ժամանակներս Երևան են եկել մի քանի աֆերիստներ, որոնք իրանց ցոյց տալով իբրև խուզարկու-ոստիկանութեան գործակալներ մտնում են զանազան գիւնոններ, հիւրանոցներ ու այլ տեղեր և դրամներ կորզում։ Մօտ օրերս տեղական ոստիկանութիւնը այդ բանի համար կալանաւորել է երկու հոգու—խուզարկու այդ ոստիկանութեան նախկին գործակալ՝ ժառանգական պատուաւոր քաղաքացի Յէօղոր Բօմանովին և Բագու քաղաքի 3-րդ ոստիկանամասի նախկին թաղական վերակացու Վասիլիյ Նայդենովին։ Այդ երկու երիտասարդները զանազան հանցանութիւնների հագուստներով ապրում էին հիւրանոցներում և խուզարկու-ոստիկանութեան գործակալ ձևանալով ստանում էին այնտեղ ապրողներին և ապա ուտում ու խմում էին, առանց վճարելու։ Այդպիսի բէֆերից մէկի ժամանակ էլ նրանք կալանաւորվել են «Вѣна» հիւրանոցում։ Հիւրանոցներից բացի՝ նրանք գործում էին նաև քաղաքի մէջ, կանգնեցնում էին անցուդարձ անողներին, խուզարկում էին և ստրճանակներ գտնելու դէպքում՝ տէրերից փող ստանալով, վերադարձնում էին ստրճանակները։ Խուզարկու ոստիկանութեան գլխաւորի խնդիրքի համաձայն նրանք արտաքսվում են քաղաքապետութեան սահմաններից։

◆ Մի քանի օր առաջ, «Նադեժդա» ընկերութեան նաւամատոյցի մօտ, Սարուխան Աւագեան անունով մի մարդ ցերեկվայ ժամը 3-ին լողանալիս ընկնում է խոր տեղը և անկարող լինելով լողալ՝ սկսում է խեղդվել։ Մօտիկ գտնվող մարդկանցից ոչ ոք չէր համարձակվում ջուրը նետվել և փրկել նրան։ Երբ 10 րոպէ ժամանակ յետոյ զոհը խորասուզվեց ջրի տակ, դէպքի տեղին մօտեցաւ մի մարդ և առանց որևէ բան ասելու, շորերով նետվեց ջրի մէջ և, մօտենալով այն տեղին, ուր խորասուզվեց զոհը, ջրի տակ մտաւ ու խեղդվողին դուրս քաշեց ափը։ Հաւաքված բազմութիւնը հարձակ անձնուէրին համակրութեան ցոյց արեց։ Զեռք առած միջոցներով ուշքի եկաւ Աւագեանը։ Նրան փրկողը «Կասպիական ընկերութեան» ֆիրմայում ծառայող Պաւել Անաստասիեվն էր։

◆ Ռ. Վ. Օհանջանեանին թոյլատրված է Բագու քաղաքում հրատարակել ամենօրեայ հայերէն մի լրագիր «Նոր Օրեր» անունով։

(«Б.»)

ԼՈՒՐԵՐ ԱԽԱԼՑԽԱՑԻՑ

—

◆ Կիրակի, յուլիսի 20-ին, ժողովարանի ձմերային դահլիճում մի խումբ սիրողներ տուին յօգուտ հայ կաթոլիկների դպրոցի մի ներկայացումն։ Խաղացին՝ 1) «Նիսիա» վոդ. 1 գործ. և 2) «Օրթաճալու քէֆը»։ Խաղից յետոյ տեղի ունեցան պարեր։ Մուտք եղաւ մօտ 50 ր., իսկ միւս օրը նոյն տեղում վրաց դերասանական խումբը տուեց վրացերէն երկրորդ ներկայացումը, խաղալով և ռուսերէն լեզուով «Привидѣніе» վոդեվիլը։

◆ «Ախալցխայի հայ-դրամատիկ սիրողների ընկերութեան» բացման նախապատրաստութիւնները տեսնելու համար ընտրված է ժամանակաւոր մի մասնախումբ եռեք անդամից բաղկացած։ Մասնախումբը պէտք է գտնէ ընկերութեան նոր անդամներ և երբ անդամների թիւը բաւարար քանակութեան հասնի՝ անմիջապէս նշանակվելու է ընդհանուր ժողով ընկերութեան վարչական մարմին ընտրելու։ Մասնախմբի անդամներ ընտրվել են Ստ. Աղնաւուրեան, Խ. Թէլմիշեան և Ա. Անիսոնեան։

◆ Ախալցխայի շրջակայ գիւղերում եղեան են եկել մի քանի աւազակային խմբեր, որոնք ճանապարհորդներին և խեղճ գիւղացիներին անխնայ կերպով թալանում էին։ Ասում են, որ աւազակախումբը կազմված է Ա.ջարիայի վրացախօս և տեղական փախած թուրքերից։

◆ Սպանութիւնները մեզանում հետզհետէ սովորական բնաւորութիւն են կրում։ Լոյս յուլիսի 3-ի գիշերը քաղաքումս սրով սպանել էին կալուածատէր Բէթանովի գիւնագիտ որդի Ֆել. Բեթանովին։ Սպանողները անյայտ են, միայն կասկածանքով ձերբակալված են 2 մարդ։ Իսկ այս կիրակի, ամսոյս 20-ին, Ծուղրութ գիւղն ուխտ գնալու ժամանակ, ինչպէս պատմում են, ստրճանակով իրան վիրաւորել է ծանր կերպով Երուանդ անունով մի թիւրքահայ երիտասարդ։

Խ.

ՄԱՄՈՒԼ

«Զանգակի» մէջ տխրահռչակ Վահէն շարունակում է աղաւաղել փաստերը։ Բոլորովին անգիտութեան տալով մեր ակնարկը այժմ հանգուցեալ մի քանի փողոցային թերթերի կատարած սխրագործութիւնների մասին, որոնք առիթը չէին փախցնում պախարակելու երիտասարդ-թիւրքերի գործունէութիւնը, նա հանդէս է բերում «Դրօշակը», որի մասին մենք մի խօսք անգամ չենք ասել։ Ինչպէս «Մշակի» ընթերցողները գիտեն, «Դրօշակը» ամբողջ այն բանակուի ժամանակ, որ գոյութիւն ունէր մեր լրագրի և յայտնի ուղղութեան օրգանների միջև, իրան պահեց կօրրեկտ և սօլիդ և «Մշակին» ևս նոյն վարմունքը ցոյց տուեց նրա վերաբերմամբ։ Այստեղ տեղը և ժամանակը չէ բացատրել թէ ինչու «Դրօշակը» իրան հեռու պահեց այդ բանակուից։ Դա թողնում ենք ապագայ պատմութեան, որ և ցոյց կը տայ, թէ ինչու մի ժամանակ հեղինակութիւն վայելող կազմակերպութիւնը կարողացաւ այնքան վարկաբեկվել և ընկնել ժողովրդի աչքում,

Մի ցաւ էլ պէտք է պատճառենք Վահէին, եթէ յայտնենք (թէև այս փաստը իրան շատ լաւ է յայտնի), որ «շիա» և «շուն» խօսքերի վերաբերմամբ «Արշալոյսի» դէմ յարձակվողը «Մշակի» մէջ եղել է պ. Լէօն և ոչ պ. Հ. Առաքելեանը. հետևաբար, Վահէի հնսինուացիաները պէտք է վերաբերել այն անձին, որին նա և իր հաւախոհները վերջերս փառաբանութեամբ երկինք էին բարձրացնում։

Ծիծաղելի է, երբ Վահէի պէս մտաւորը բաղար դարձրած մարդիկ յանդգնում են գաղափարական դրօշակի մասին խօսել։ Տիրացու-քահանայ դառնալ խոստացող ու իր խոստումն չը կատարող անձը միշտ կարծում է, թէ ազնուութիւնը, գաղափարական մաքրութիւնը հէնց կայանում է նրանում, որ այդ իր հաւաբ սին բառերի մասին անդադար գոռայ և գոչէ։ Բայց տիրացու և չակերտաւոր սոցիալիստ Վահէների դիմակը վաղուց պատռվել է հասարակութեան առաջ...

*

Թէ մտաւորը և թէ հասարակութեան զանազան խաւերը վերջերս արդարացի տրրտունջ արտայայտեցին, որ Ներսիսեան դպրոցի այժմեան հոգաբարձութիւնը ամբողջ 2 տարի ոչ մի հաշիւ չէ ներկայացրել թէ իր ընտրողներին և թէ հասարակութեան, խախտելով թէ դպրոցի կանոնադրութիւնը և աւանդական սովորութիւնը, և թէ Փոխարքայի ժամանակաւոր կանոնները, որոնց հիման վրա նա և ընտրվել է։

Հոգաբարձութիւնը զարքէական լռութիւն պահպանեց այդ արդարացի պահանջի դէմ և, ընդհակառակը, նոր ոսնձգութիւններ արեց երկարացնելու ապօրինաբար իր պաշտօնավարութեան շրջանը։ Սակայն նրա տեղ մի անանուն հոգաբարձու հանդէս եկաւ «Զանգակի» մէջ (№ 7) արդարացնելու հոգաբարձութեան վարմունքը և հաշիւ չը ներկայացնելը ու լռությանը, թէ «հոգաբարձութեան կողմից ալիսամարհանքը կը լինի միակ պատասխանը»։

Ի հարկէ, մենք չենք կամենում հաւատալ թէ հոգաբարձութիւնը թոյլ տար իրան այդպիսի պատասխան տալ։ Միւս կողմից չը գիտենք, թէ անանուն հոգաբարձուն արտօնված է խօսել հոգաբարձութեան անունից, հաշիւ ներկայացնել նրա կողմից և ինչու հոգաբարձութիւնը ուղղակի հանդէս չէ եկել, փոխանակ մի անանուն հոգաբարձուի բերանով հաշիւ տալու։ Հէնց այդ հաշիւն էլ պարունակում է շատ կէտեր, որոնց մասին երկար կարելի էր խօսել, բայց քանի որ յայտնի չէ հաշիւը ինչ ընաւորութիւն է կրում, պաշտօնական թէ մասնաւոր, մենք զանց ենք առնում խօսել նրա մասին։ Ուստի և միանգամայն արդարացի ենք գտնում «Հովիւ» շաբաթաթերթի պահանջը, թէ «հրապարակի վրա պէտք է դնել դպրանոցի տպագրված մասնաւոր հաշիւը»։

Այդ ժամանակ միայն կարելի կը լինի իմանալ, թէ անանուն հոգաբարձուի դիմակաւորեալ հաշիւը որքան արժէք ունի։ Առայժմ այսքանը կարող ենք ասել սնապարծ հոգաբարձուին, որ եթէ մեծ գործ է համարվում դպրոցի պատրաստ և կանխիկ փողերը ծախսելը, այդ փողերով գնային գնելը, շինութիւններ կառուցանելը, ուրեմն ինչ անանուն պէտք է տալ նախորդ հոգաբարձութեան կատարած գործին, որ ամբողջ 3 տարի կառավարեց և պահպանեց դպրոցը այն ժամանակ, երբ նրա բոլոր եկամուտները, բոլոր դրամները գրաւված էին։ Եւ սակայն «Հոգաբարձուն» դեռ նրա դէմ քարեր շպրտելու անբարեխղճութիւնն ունի։

◆ Սպանութիւնները մեզանում հետզհետէ սովորական բնաւորութիւն են կրում։ Լոյս յուլիսի 3-ի գիշերը քաղաքումս սրով սպանել էին կալուածատէր Բէթանովի գիւնագիտ որդի Ֆել. Բեթանովին։ Սպանողները անյայտ են, միայն կասկածանքով ձերբակալված են 2 մարդ։ Իսկ այս կիրակի, ամսոյս 20-ին, Ծուղրութ գիւղն ուխտ գնալու ժամանակ, ինչպէս պատմում են, ստրճանակով իրան վիրաւորել է ծանր կերպով Երուանդ անունով մի թիւրքահայ երիտասարդ։

Խ.

Մ Ա Մ Ո Ւ Լ

«Զանգակի» մէջ տխրահռչակ Վահէն շարունակում է աղաւաղել փաստերը։ Բոլորովին անգիտութեան տալով մեր ակնարկը այժմ հանգուցեալ մի քանի փողոցային թերթերի կատարած սխրագործութիւնների մասին, որոնք առիթը չէին փախցնում պախարակելու երիտասարդ-թիւրքերի գործունէութիւնը, նա հանդէս է բերում «Դրօշակը», որի մասին մենք մի խօսք անգամ չենք ասել։ Ինչպէս «Մշակի» ընթերցողները գիտեն, «Դրօշակը» ամբողջ այն բանակուի ժամանակ, որ գոյութիւն ունէր մեր լրագրի և յայտնի ուղղութեան օրգանների միջև, իրան պահեց կօրրեկտ և սօլիդ և «Մշակին» ևս նոյն վարմունքը ցոյց տուեց նրա վերաբերմամբ։ Այստեղ տեղը և ժամանակը չէ բացատրել թէ ինչու «Դրօշակը» իրան հեռու պահեց այդ բանակուից։ Դա թողնում ենք ապագայ պատմութեան, որ և ցոյց կը տայ, թէ ինչու մի ժամանակ հեղինակութիւն վայելող կազմակերպութիւնը կարողացաւ այնքան վարկաբեկվել և ընկնել ժողովրդի աչքում,

Մի ցաւ էլ պէտք է պատճառենք Վահէին, եթէ յայտնենք (թէև այս փաստը իրան շատ լաւ է յայտնի), որ «շիա» և «շուն» խօսքերի վերաբերմամբ «Արշալոյսի» դէմ յարձակվողը «Մշակի» մէջ եղել է պ. Լէօն և ոչ պ. Հ. Առաքելեանը. հետևաբար, Վահէի հնսինուացիաները պէտք է վերաբերել այն անձին, որին նա և իր հաւախոհները վերջերս փառաբանութեամբ երկինք էին բարձրացնում։

Ծիծաղելի է, երբ Վահէի պէս մտաւորը բաղար դարձրած մարդիկ յանդգնում են գաղափարական դրօշակի մասին խօսել։ Տիրացու-քահանայ դառնալ խոստացող ու իր խոստումն չը կատարող անձը միշտ կարծում է, թէ ազնուութիւնը, գաղափարական մաքրութիւնը հէնց կայանում է նրանում, որ այդ իր հաւաբ սին բառերի մասին անդադար գոռայ և գոչէ։ Բայց տիրացու և չակերտաւոր սոցիալիստ Վահէների դիմակը վաղուց պատռվել է հասարակութեան առաջ...

*

Թէ մտաւորը և թէ հասարակութեան զանազան խաւերը վերջերս արդարացի տրրտունջ արտայայտեցին, որ Ներսիսեան դպրոցի այժմեան հոգաբարձութիւնը ամբողջ 2 տարի ոչ մի հաշիւ չէ ներկայացրել թէ իր ընտրողներին և թէ հասարակութեան, խախտելով թէ դպրոցի կանոնադրութիւնը և աւանդական սովորութիւնը, և թէ Փոխարքայի ժամանակաւոր կանոնները, որոնց հիման վրա նա և ընտրվել է։

Հոգաբարձութիւնը զարքէական լռութիւն պահպանեց այդ արդարացի պահանջի դէմ և, ընդհակառակը, նոր ոսնձգութիւններ արեց երկարացնելու ապօրինաբար իր պաշտօնավարութեան շրջանը։ Սակայն նրա տեղ մի անանուն հոգաբարձու հանդէս եկաւ «Զանգակի» մէջ (№ 7) արդարացնելու հոգաբարձութեան վարմունքը և հաշիւ չը ներկայացնելը ու լռությանը, թէ «հոգաբարձութեան կողմից ալիսամարհանքը կը լինի միակ պատասխանը»։

Ի հարկէ, մենք չենք կամենում հաւատալ թէ հոգաբարձութիւնը թոյլ տար իրան այդպիսի պատասխան տալ։ Միւս կողմից չը գիտենք, թէ անանուն հոգաբարձուն արտօնված է խօսել հոգաբարձութեան անունից, հաշիւ ներկայացնել նրա կողմից և ինչու հոգաբարձութիւնը ուղղակի հանդէս չէ եկել, փոխանակ մի անանուն հոգաբարձուի բերանով հաշիւ տալու։ Հէնց այդ հաշիւն էլ պարունակում է շատ կէտեր, որոնց մասին երկար կարելի էր խօսել, բայց քանի որ յայտնի չէ հաշիւը ինչ ընաւորութիւն է կրում, պաշտօնական թէ մասնաւոր, մենք զանց ենք առնում խօսել նրա մասին։ Ուստի և միանգամայն արդարացի ենք գտնում «Հովիւ» շաբաթաթերթի պահանջը, թէ «հրապարակի վրա պէտք է դնել դպրանոցի տպագրված մասնաւոր հաշիւը»։

Այդ ժամանակ միայն կարելի կը լինի իմանալ, թէ անանուն հոգաբարձուի դիմակաւորեալ հաշիւը որքան արժէք ունի։ Առայժմ այսքանը կարող ենք ասել սնապարծ հոգաբարձուին, որ եթէ մեծ գործ է համարվում դպրոցի պատրաստ և կանխիկ փողերը ծախսելը, այդ փողերով գնային գնելը, շինութիւններ կառուցանելը, ուրեմն ինչ անանուն պէտք է տալ նախորդ հոգաբարձութեան կատարած գործին, որ ամբողջ 3 տարի կառավարեց և պահպանեց դպրոցը այն ժամանակ, երբ նրա բոլոր եկամուտները, բոլոր դրամները գրաւված էին։ Եւ սակայն «Հոգաբարձուն» դեռ նրա դէմ քարեր շպրտելու անբարեխղճութիւնն ունի։

ԹԱՆԳԱՐԱՆ Լ. Ն. ՏՕԼՍՏՕՅԻ ԱՆՈՒՆՈՎ

(Նամակ խմբագրութեան)

—

Պետերբուրգ, 20 յուլիսի

Ներկայ տարվայ յունիս ամսին Պետերբուրգում պարբերական ժամուլի համագումարի ընտրած կօմիտէը ամենամօտիկ ժամանակներս սկսելու է իրագործել համագումարի որոշումը՝ Լեվ Նիկոլայեվիչ Տօլստոյի անունով Պետերբուրգում թանգարան հիմնելու համար։

Կօմիտէը վերին աստիճանի ցանկալի է համարում թանգարանի մէջ հաւաքել, ի միջի այլոց, ինչպէս ռուսական, նոյնպէս և արտասահմանեան պարբերական հրատարակութիւնների յօբելեանական բոլոր №№-ը, նոյնպէս և այն բոլոր գրքերն ու բրոշիւրները, որոնք նուիրված կը լինեն Լ. Ն. Տօլստոյին։

Այդ ի նկատի առնելով մենք դիմում ենք ձեզ խնդարհ խնդիրքով՝ ուղարկել թանգարանի համար ձեր հրատարակութեան յօբելեանական համարից երկուական օրինակ։

Հնարաւորութիւն չունենալով անժիջապէս դիմել բոլոր պարբերական հրատարակութիւններին, նամանաւանդ և Լ. Ն. Տօլստոյի մասին հրատարակված գրքերի բոլոր հեղինակներին ու հրատարակիչներին, մենք թոյլ ենք տալիս մեզ խնդարհաբար խնդրելու ձեզ տպագրել ներկայ դիմումը։ Խնդրում ենք մամուլի բոլոր օրգաններին արտատպել սոյն նամակը։

Տօլստոյեան թանգարանը առայժմ բացված չէ և չունի իր սեփական բնակարանը. բոլոր նամակներն ու ծրարները նրա համար հարկաւոր է ուղարկել հեռեւեալ հասցեով. въ редакцію журнала «Минувшіе Годы» (С.-Петербургъ, Лиговка, 40)։

Կօմիտէը բաղկացած է հետեւեալ անձերից. նախագահ Մ. Մ. Կովալէվսկի, փոխնախագահներ՝ Պ. Ն. Միլիւկով և Մ. Մ. Ֆէօդորով, քարտուղարներ՝ Վ. Վ. Վոլոմոզով և Մ. Ա. Ստասիուլիչ, անդամներ՝ Ն. Ֆ. Աննենսկի, Կ. Վ. Արկադակսկի, Դ. Օ. Բատիշչով, Վ. Եա. Բոգուչարսկի, Ս. Ա. Վենգերով, Ի. Վ. Գեսսեն, Գ. Կ. Գրաղովսկի, Վ. Գ. Կորոլենկո, Ս. Ն. Պրոկոպովիչ, Ա. Վ. Պեշեխոնով, Ա. Ա. Ստասիպին։

ԱՐՏԱՔԻՆ, ՏԵՍՈՒԹԻՒՆ,

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

—

Ուրմի, 9 յուլիսի

Պարսկաստանի ներքին և արտաքին կեանքը ուժգին փոթորիկներից այնքան է։

Միապետական և հակամիապետական ապրինահեղ պայքարը՝ Թէհրան, Թաւրիզ մայրաքաղաքներում, իր վրա է բեռնել բոլոր միւս երկրորդական և երրորդական քաղաքների ուշքն ու միտքը, վերջ ի վերջոյ յաղթող կողմի գերիշխանութեան հպատակվելու սպառնալիքով։

Միապետութիւնը Թէհրանում յաղթական դուրս եկաւ։ Թաւրիզ շարունակվում է եղբայրասպան մրցումը։ Անպատճառ այդտեղ ևս այսօր-վաղը կը տանէ միապետութիւնը։

Քաղաքը շրջապատված է տասնեակ հազար կառավարական զինուորներով։ Ուստեղից ոչինչ չեն թողնում մտցնել քաղաք։ Միայն հացի լիտրը 20 դրանից անցել է և չէ ճարվում. կենսական միւս պէտքերը նոյն համեմատութեամբ։ Անշուշտ այս գրութեան մէջ միապետութիւնը կը տանէ...

Այսպէս, մինչ ներքին թշնամութիւնը ծայր աստիճանին է հասել, արտաքինը—չարախնդաց դրացի, հաւատակից պետութիւնը, նորանոր գրաւումների անարգել փորձերով՝ արդէն գրաւված տեղերն է ընդարձակում։

Էնզելի մեկը (գաւառակ) իր գիւղերով, մինչև Ուրմիի ծովափը, գրաւելու են եկել 250 թիւրք ասկերներ։

Նահանգապետ Մօշթաշարի և Թահիր փաշայի կողմից գնացած մարդկանց կտրուկ պատասխանել է նրանց հրամանատար Եաւէրը, որ ինքը սուլթան Համիդի հրամանով տիրում է յիշեալ գիւղերին և կախում չունի ոչ ոքից։

Անսպասելի չը պէտք է թւայ, եթէ մի քանի օրից յետոյ վերևի պատասխանը կը լսվի նաև Սալմաստի համար։

Մակուի 200 ձիաւորներն հեռացան իրանց տեղերը։ Ժողովուրդը այդ կողոպտիչներին անէծքով ճանապարհ դրեց։

Արզար Տէր-Եսայեան

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՀԵՌԱԳՐ. ԳՈՐԾԱԿԱԼ.

24 յուլիսի

ԿԻԵՎ. Միսիոնէրական համագումարը, ընդունելով հակաադանդաւորների և հակահերձուածողների մասնաժողովի զեկուցումները՝ արգելելու ուղղափառներին ամուսնանալ հերձուածող միստիկների և բապտիստների հետ, բացի Դօնեան աղանդաւոր մօլոկաններից, որոշեց միջնորդել այդ մասին սինոդի առաջ և ցանկութիւն յայտնեց, որ մէկ անգամ ընդ միշտ վերջանայ աղանդաւորների հետ ամուսնանալը։ Համագումարը անհրաժեշտ համարեց կոչ ուղղել ներքինների հետ սիսիոնէրական միջոցներով և խնդրել սինոդից՝ արգելել ներքինիներին Ռուսաստան գաղթել Ռումինիայից, որտեղից գլխաւորապէս տարածվում է այդ վարդապետութիւնը։ Կ. Պոլսի տիեզերական պատրիարք Եօակիմ III-ի պատրիարքի ներկայացուցիչ Յակոբ վարդապետը պատրիարքի անունից ողջունեց համագումարը։ Համագումարի մասնակցողները ի պատասխանի ողջունին երկարակեցութիւն մաղթեցին պատրիարքին։

ՎԱՐՇԱՎԱ. Զինուորական դատարանը, քննելով լեհական ոսցիալիստական կուսակցութեան պատկանելու մէջ մեղադրվող 14 հոգու գործը, տաժանակիր աշխատանքների դատապարտեց մէկին 14 տարով, 4-ին 8 տարով, 1-ին 2 տարով և 8 ամսով, 3-ին աքսորի, մնացածները արդարացված են։

ՍՏՕԿՀՕԼՄ. Գերմանական կայսրը իր ամուսնու հետ ճանապարհ ընկաւ երեկոյեան 6 ½ ժամին։

ՍՏՕԿՀՕԼՄ. Երէկ թագաւորը երկարատև ունկնդրութեան ընդունեց պետական քարտուղար Ֆօն-Շէնին։ Ցերեկով Ֆօն-Շէնը երկարատև խօսակցութիւն ունէր արտաքին գործերի մինիստր Տրօլլէի հետ։

ԴՕՆԱՔՇԻՆԴԷՆ. Հրդեհը ոչնչացրեց հարեաւ ամբողջ քաղաքը, 400 ընտանիքները անտուն են մնացել։ Հրդեհի ճարակ գնաց շատ գոյք և տաւար։

ԲԵՐԼԻՆ. Բոլոր լրագիրները առաջնորդող յօդուածներ են նուիրում կոմս Ցէպպէլինի օդապարիկի խորտակման, ցաւակցութիւն յայտնելով գիւտ անողի ողբերգական վիճակին, խստանալով նրան ամբողջ Գերմանիայի հաւակրութիւնը և աջակցութիւնը։ Գերմանիայի շատ և շատ քաղաքներից հաղորդում են, որ շատ քաղաքներում կօմիտէներ են կազմվում նուիրատուութիւններ հաւաքելու կոմս Ցէպպէլինի սիստէմով օդապարիկներ շինելու համար։ «Frank. Zeit.» լրագրին Վիննիպէգից հաղորդում են յուլիսի 22-ից, որ այնտեղ գործադրել են արել կանտատան խաղաղովկիանական երկաթուղու բոլոր մեքենավարները և վարպետները։ Վախենում են, որ լուրջ կերպով կարող է խանգարվել երկաթուղու կանոնաւոր երթևեկութիւնը։

Բացվեց պատմական գիտութիւնների միջազգային կօնգրէսը։ Կօնգրէսը բացվեց պրոֆէսոր Ֆօն Կոզերի ճառով։ Ներկայ էին կայսերական իշխանութիւնների նախագահները, նոյնպէս պրուսական պրինց Ֆրիդրիխ-Լէօպոլդը որպէս Վիլհէլմ կայսրի ներկայացուցիչ։ Պետական քարտուղար Բէտմանգոլվեգ ողջունեց կօնգրէսի անդամներին գերմանական կառավարութեան անունից։ Կօնգրէսին մասնակցում են ռուս պրոֆէսօրները և գիտնականները։ Կօնգրէսի պատուաւոր նախագահներից մէկը ընտրված է Պետերբուրգի համալսարանի պրիվատ-դօցէնտ Լապպօ-Դանիլէվսկի։

ՕԴԷՍՍԱ. Մայր տաճարում կատարվեց ժողովրդական երգիչ Ագրնէվ-Սլավեանսկու թաղման հանդէսը։ Զինուորական նուագախմբի մարշի հնչիւնների և բազմահազար ամբոխի ուղեկցութեամբ դուրս բերին եկեղեցուց հանգուցեալի մարմինը իրանց ձեռքերի վրա գօրքերի հրամանատարը, գեներալ-նահանգապետը և այլ իշխանաւոր անձինք։ Հանգուցեալը կը թաղվի Եալտայում։

ԿՕՊԵՆՀԱԳԷՆ. Տեղեկութիւններ են ստացված, որ գրէնլանդեան արշաւախմբի ղեկավար Էրիխսոնը սառուցի հոսանքից տանվելով սովամահ եղաւ։

ԿԱԼՈՒԳԱ. Գտնված է մի գաղտնի տպարան, որը տպում էր սոցիալ-դեմօկրատական կուսակցութեան Կալուգայի կօմիտէի լրագիրը։ Աշխատանքի ժամանակ կալանաւորված են երեք մարդ։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. Յուլիսի 24-ին ստորագրվեցին և փոխանակվեցին յայտագիրները արտաքին գործերի մինիստրի և եաբօնական գործերի հաւատարմատարի միջև ռուսական և եաբօնական կալուածքների մասին Սախալինում։

Ներքին գործերի մինիստրութեան զէմստվօյի մասի կառավարչի օգնական Ստեֆանովիչ ուղարկված է Կովէնի և Մօգիլէվի նահանգները տեղական գիւղացիական հիմնարկութիւնները քննելու համար։

Կուպրէյնով ուղարկվում է Բաղուեան, Լիբլինեան և Սուվալկեան նահանգները տեղական գիւղացիական հիմնարկութիւնները քննելու համար։

Մանկական ապաստարանների հոգաբարձու հոմէական իրաւունքի դոկտոր Սոկոլովսկի նշանակված է Խարկովի ուսումնարանական շրջանի հոգաբարձու։

ՍԻՄՖԷՐՕՊՕԼ. Յուլիսի 23-ին Բախչիսարայ կայարանում տեղի ունեցաւ մեծ հրդեհ, որը լափեց կայարանի կողքին գտնվող պահեստը և շատ զանազան ապրանքներ։ Կայարանը աջողվեց ազատել։

ԲԵՐԼԻՆ. Լրագիրների տեղեկութիւնների համեմատ, մասնաւոր հանգանակութիւնը յօգուտ կոմս Ցէպպէլինի սիստեմի օդապարիկի կառուցման տուեց արդէն 1,300,000 մարկ։ Մի քանի անձինք ստորագրեցին 100,000 մարկ։

ԲԵՐԼԻՆ. Պատմական գիտութիւնների կօնգրէսի առաջին ընդհանուր ժողովում նախագահում էր Լապպօ Դանիլէվսկին։ Առաջին ճառն արտասանեց Միացեալ-Նահանգների դեսպան Դիլլ, որը խօսեց պատմաբանի էտիկական նպատակների մասին։ Կօնգրէսին մասնակցողների թիւը հազարից աւելի է։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ԲԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ԲԱԼԱՆԹԱՐ
Յ. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՄՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ
Հիմված 1880 թ.
(Գուկիա, Վօրոնցովի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից
ԸՆԴՈՒՆԵՐԸ
Բ. Ա. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան և վեներական (սիֆիլիս) հ.։
Կ. Մ. ՋԻԿՕՎԱՆԻ—9½—10 ժ. ներքին և նեարդային։
Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆՑ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.։
Ն. Տ. ՄՈՒՐԻՆ—10—12 ժ. ականջի, կոկորդի և քթի հիւ.։
Ս. Դ. ԱՍԻՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթուվեներական, վիրաբուժութեան և միզասեռ.։
Ա. Մ. ՓՈՒՂԻՆՕՎ—12—1 ժ. ներքին և երեխայոց ծաղկահար.։
Ա. Գ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆՑ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.։
ԿԻՆ-ԲԺԻՇԿ Ա. Ի. ՇՁԵՐԲԻՆԱ—1½—2 ժ. մանկաբարձութեան։
Դ. Ց. ԳՈՒՐԳԵՆՕՎ—12—12½ ժ. կանանց և մանկաբարձութեան։
ԵՐԵԳՈՆԵՐԸ
Ա. Ց. ԳՐԻԳՈՐԵԱՆ—6—7 ժ. վիրաբուժ., վեներական, միզասեռ և մորթու հ.
Վճարը 50 կ.։ Հաւաքները ձրի։ Համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։
Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Բ. Նաւասարդեան

ԲԺԻՇԿ
Ա. Միքիրտչեանց
Անցեալ տարիների նման ընդունում է հիւանդներին վեներական և մորթու ցաւերով Կիսլովոդսկում, հիւրանոց «Օսսիա»։
(ա. օ.) 100—89

ԲԺՇԿԱՊԵՏ
Տ. ԳԷՈՐԳ-ԲԷԳԵԱՆ
ԱՁՔԻ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ
Ընդունելութիւնն ամեն օր
Առաւօտեան ժամի 9-ից մինչև 12
Երեկոյեան » 5-ից մինչև 7
Վելեամինովսկայա փողոց № 8.
(հ. հ. շ.) 100—93

ՀՐԱՒԷՐ

Սրանով խնդրում եմ Կուկիայի Նորաշէն ս. Աստուածածին եկեղեցու պ. պ. ծխականներին շնորհ բերել կիրակի, ամսոյ 27-ին, մեր եկեղեցին, ծխական ժողովի, երկու հոգաբարձու ընտրելու՝ Կուկիայի գերիզմանատան պարսպի շինութեան համար հոգ տանելու։

Ծխատէր՝ Ա. ք. Տէր Յովհաննիսեանց
(տպ.) 1—1

ՊԵՍՏԻԳՕՐՍԿԻ
ՀԱՅՈՑ ԾԽԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԻ ՀԱՄԱՐ
հարկաւոր է
Ա Ի Ա Գ Ո Ի Ս Ո Ի Ց Ի Ջ
17 դաս շաբաթական (15 դաս ռուսաց լեզու և 2 դաս աշխարհագրութիւն)։ Ցանկալի է ինստիտուտաւարտ։ Պայմանների համար դիմել հոգաբարձու Գ. Սուքիասեանցին։
(օ. ժ.) (տպ.) 6—4

ՍԱՆԱՏՕԳԷՆ ԲԱՌԻԷՐ

Տալիս է

7500-ից աւելի պրոֆէսորներ և բժիշկներ տուին հրաշալի կարծիքներս Բաուէր սանատօգէնի մասին, իբրև ամենաուսալի և ամբողջող միջոցի գանգրենի տեսակ հիւանդութիւնների ժամանակ։

Իսկականը միայն Բաուէր և ընկ. ծախվում է բոլոր դեղատներում և դեղաբաշխ մագազիններում։ Բրոշիւրները ուղարկվում են ձրի։ Московское отдѣленіе, Мясницкая ул., № 31.

ՆՈՐ ՈՅԺԵՐ

(մ. 13, 24, յուն. 10, 28, յուլ. 12, 26, օգ. 9) (135,021) 7—5

Типографія „Экономія“ Ав. Мухлусіанова съ С-ми. Большая Бакинская ул. № 3.